

2292

Amherst
Mass.

84
U-86

Bau g-m
1898

2011

84-2
R

ՏԱՐՏԻՒԹ

ՄՈԼԻԵՐԻ ԿԱՏԱԿԱՆԱԴ

ՅՐԱՆՈԵՐԵՆԵՑ ԹԱՐԴՄԱՆԵՑ

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԵ

— — — — —

ԲՈԳՈՒ

ՏՊԱՐԱՆ „Ա. Թ Օ Ր“

1898

84-
—
5-86

Այ

ՏԱՐՏԻՒԹ

ՄՈՒԷՐԻ ԿԱՏԱԿԱԽԱՂ

ՅՐԱՆՍԵՐՔՆԵՑ ԹԱՐԴՄԱՆԵՑ

ԽՈՐԴՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԵ



ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „Ա. ՐՕՐ“

1898

608

1897

Дозволено Цензурою. Тифлисъ, 13-го Июля 1897 г.



3455-49

ՏԱՐՏԻՒԹՅ

հայերէն բարգմանուրիւնս տպագրելու համար
բարեսփրաբար նուիրեց 150 ռուբլի Աստրախանի
մէջ բնակող պ. Յարուրիւն Զաքարեանը ի յիշա-
տակ իր քոզ՝ Մարիամ Կարագեօվեանի: Թող
ուրեմն օրինութեամբ յիշվի ս. Մարիամ Կարա-
գեօվեանի անունը իր երախտագէս բարեսկը եղօր
նուերի առիթով:

Խ. Ե. Ս.

2003

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժան Բատիստ Մօլիէր ծնված է Փարիզում 1622 թ. յունիլարի 15: Մանուկ հասակից Մօլիէրը չափաղանց սիրում էր թատրոն, ուր երբեմն տառում էին նորանք: 1641 թ. նա սկսեց օրէնսդիտութիւն ուսումնասիրել Օպէանի մէջ եւ փաստաբան դարձաւ: Սակայն թատրոնի սէրը յաղթեց եւ Փարիզ վերադառնալով, Մօլիէրը գերասանական մի խմբի գլուխ անցաւ եւ շրջագայելով սկսեց ներկայացմունք տալ, մինչեւ որ վերջն եկաւ հաստառվեցաւ Փարիզի մէջ: Նա զարմանալի յատկութիւն ունէր զանազան աննկատելի գծեր նշմարելու ամեն կարգի եւ ցեղի մարդիկների մէջ: Այս չքնաղ յատկութեամբ օժտված Մօլիէրն սկսեց կատակախաղեր զրել: Նորա կատակախաղերից մարդկութեան անմահ ժառանգութիւն են: Տարտիւֆ, Ժլատ, Մարդացեաց, Գիտուն Կանայք, Դոն Ֆուան եւ ազնիր ամենամիծ կատակախաղ Տարտիւֆը նա վերջացրեց 1664 թ., բայց երեք տարի տեւեց զանազան փարիսեցիների եւ սուս աստուածապաշտների պատերազմ այս հրաշալի երկի ներկայացումն արգելելու, սակայն, որովհետեւ լոյսը վերջը միշտ յաղթում է խաւարին, վերջապէս Տարտիւֆը յաղթանակ տարաւ, եւ ահա մնաց զզուելի կեղծաւորների եւ սուս աստուածապաշտների յաւիտենական դատակնիք: Մօլիէրը ստիպված եղաւ Տարտիւֆի հոգեւորական կոչում եւ հագուստն աշխարհականի դարձնել: Թրանսֆայի կուի ժդ. պերճ թագաւորի

հարցին թէ ո՞վ է իր ժամանակի ամենամեծ մատենագիրը, բոււալօն խակոյն Մօլիէրի անունը տուեց։ Մօլիէրն իր թատրօնից ստանում էր տարեկան մեծաքանակ եկամուտ, որ ծախսում էր իր նուէրների, բարեգործութիւնների եւ ճոխ ճաշկերոյթների վրա, թէպէտ լնքը վերջը ստիպված էր միայն կաթոլիկութիւնը Շարունակ թատրօնում խաղալով, Մօլիէրը կրծքացաւ ստացաւ, որից եւ մեռաւ 1673 թ. փետրվարի 17։ Այն օր նա սաստիկ կրծքացաւ էր զգում։ Իր ամուսինն եւ մի բարեկամ թախանձում էին, որ թատրօն չդնայ, չխաղայ. «Ի՞նչպէս կարելի է, որ չխաղամ,—պատասխանեց Մօլիէրը,— յիսուն հաստ աղքատ իրանց օրական ապրուստ են սպասում, հապա ի՞նչ պիտի անեն նոքա, եթէ չխաղանք։ Նախատելու մարդ կլինիմ, որ զրկեմ նոցա օրական հացից, երբ կարող եմ այդ անել»։ Դիւցաղն մարդասէրը խաղաց եւ մահարեր ցաւերով բռնված բերվեցաւ տուն եւ 10 ժամին հոգին առանցեց։ Եւ որովհետեւ Մօլիէրը խոցմուանքի հետ առուտուր չէր անում եւ իր իրաւունք էր համարում սպիտակին սպիտակ եւ սեւին սեւ ասել, հողեւորականները մերժեցին եկեղեցական կարգով թաղել նորան։ Լուի ժդ. թագաւորի միջին հսար գտնելու պատուիրով միջամտութեամբ, Փարիզի արքեպիսկոպոսը թոյլ տուեց, որ նորան առանց հանդէսի միայն երկու քահանաներ գերեզմանատուն տանեն դիշերով, առանց եկեղեցի մտցնելու։ Իսկ այսօր գանդառում ենք, թէ ի՞նչի մարդիկ այժմ իրանք են մերժում հոգեւորականներին իրանց եկեղեցա-

կան ծէսերով Ամենայն ինչ իր ժամն ունի աշխարհիս վրա։

Մօլիէրի մահից յետոյ անմահացաւ նորա անունը եւ փառքը. «Եթէ մի աւելորդ գրագէտ է գոյանում աշխարհիս մէջ, Մօլիէրը մի աւելորդ ընթերցող է գտնում», ճշմարիսն ասաց Ս. Բեօվը Մօլիէրն ամեն ժամանակների, ամեն գաղափարների եւ ամեն կրքերի նրբամիտ եւ սրտագէտ թարգման դարձաւ։ Մօլիէրի Տարտուֆը մարդկութեան մտաւոր գեղեցիկ պարծանքներից մին է, խարերայ աստուածապաշտութեան եւ արծաթասէր կեղծաւորութեան հիմնալի խայտառակութեան կոթող լինելով, ժամանակակից նշանակութիւն ունենալով ամեն տեղ եւ միշտ, որտեղ կան մարդիկ, եւ մանստանդ հայերիս մէջ ներկայումս, որտեղ կեղծիք, փարիսեցութիւն, սոււտ աստուածապաշտութիւն մի տեսակ արհեստ է գարձել եւ բոյն են դրել մեր մէջ։

Ամենամեծ վատանգն ոչ սահնձարձակութեան մէջ է, ոչ կրքերի եւ մեղքի հետեւանքների մէջ, ո՛րքան եւ ծանր լինէին։ Հոգու համար մահաբեր թոյնը, որը բարորովին խանդարում է մեր բարոյականութիւնը, խարեբայութիւնն է։ Խարեբայութեան միջոցալ այն չարիքը, որի մասին խիղճը մեղ տանձում է, կատարված կամ կատարվելի չարիքը ներկայացնում են բնական, անխուսափելի, ներելի եւ մինչեւ անզամ արգարացի, խարեբայութեան միջոցով մտածում են, թէ կարող են եւ պարտական են հարկ վճարել մեր ապականված բնութեան ստոր բնազդմունքին։ Սական այրական քաջութիւն պէտք է ունենանք մեր թէ որիշի յանցանքին իրան

արժանի անուն տալու։ Կան մարդիկ, որոնք ոչ
միայն խարում են, այլ խարեբայութիւնը կեանքի
նպատակ են շինել եւ միջոցներ են ստեղծել մոլո-
րովթիւնը բացարելու եւ ներելու. ահա այս է բո-
լորովին հակառակ ձշմարտութեան, պատուին. այս
զգուելի, այս գարշելի կեղծաւորովթիւնը ասպակա-
նում է եւ խանգարում է ամենայն ձշմարիտ բարե-
պաշտովթիւն եւ ամենայն բարոյականութիւն, ապա-
կանելով եւ անբարոյականացնելով ամրող սե-
րունդներ։ Յիսուսն ասաց մաքսաւորներին եւ ա-
նառակ կանանց. «Եկայք առ իս ամենայն վաստա-
կեալք եւ բեռնաւորք», իսկ կեղծաւորներին եւ
խարեբաններին նա ասաց. «Վայ ձեզ փարիսեցոց
կեղծաւորաց»։

Գերմանացի հանրահաչակ եւ բազմահանձար
մեծ բանաստեղծ Գեօտէն զարմանալի կարծիք
յայտնեց Մօլիէրի մասին. «Քանիցս պէտք է լինում,—
ասում է Գեօտէն,—մեզ՝ փոքր մարդիկներիս կար-
դալ եւ կրկնել Մօլիէրի նման մեծ մարդու հեղի-
նակութիւնը, որ կարողանանք նորա բարձր, վսեմ,
հանրօգուտ խորախորհուրդ գաղափարները ըմբռնել
եւ զնահատել»։

Ժիւլ Տաշրո (Jules Taschereau) գրած է Մօ-
լիէրի վրա հիմնալի գիրք—Histoire de Molière—
Մօլիէրի պատմութիւն վերնագրով։

Այլեւ կան իշարկէ Մօլիէրի նորագոյն ուսում-
նասիրօղներն եւս, օրինակ Լ. Մօլանի բազմակող-
մանի ուսումնասիրած հրատարակութիւն Օւերն
առաջարկութիւն կազմակերպութիւն Օւերն

Ֆրանսիայի ձեմարանն առաջարկեց Մօլիէրին

անդամ ընտրվել այն պայմանով միայն, որ հրաժար-
վէր թատրօնական բեմից։ Մեծ բանաստեղծը բարձր
էր գասում գերասանի կոչումը, չէր փոխում իր հա-
մոզմունքը եւ առուտուր չէր անում իր խղճմտան-
քի հետ, ուստի հրաժարվեցաւ ֆրանսիայի 40 ան-
մահներից մին դառնալուց։ Մօլիէրը ձեմարանի մէջ
աեղ ստացաւ իր մահից յետոյ։ Մեր գարի սկզբում
ձեմարանի հանդիսարանի մէջ մեծ բանաստեղծին
արձան կանգնեցրին այս վերնագրով։ Rien ne
manque à sa gloire, il manquait à la notre. (Ոյխչ
չէ պակաս նորա փառքին, բայց հարկաւոր էր նա
մեր փառքին)։

Խ. Ե. Ս.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՆԵՐ.

Տիկին Պէրնէլ, Օրգօնի մայրը.
Օրգօն՝ Էլմիրի այրը.
Էլմիր՝ Օրգօնի կինը.
Դամիս եւ Մարիան՝ Օրգօնի դաւակները.
Կէանոս՝ Էլմիրի եղբայրը.
Վալէր՝ Մարիանի փեսացուն.
Տարտիւֆ՝ կեղծ աստուածապաշտ.
Դօրին՝ Մարիանի աղախինը.
Ֆլիպօս՝ տիկ. Պէրնէլի սպասուհին.
Լոյալ՝ դատական կարգադրիչ.
Ոստիկանապետ.

Գործողութիւնը կատարվում է Փարիզում, Օրգօնի
տան մէջ:

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ԵՐԵՒՈՅՑԹ

ՏԻԿ. Պէրնէլ, ԷԼՄԻՐ, ԴԱՄԻՍ, ՄԱՐԻԱՆ,
ԴՕՐԻՆ, ՖԼԻՊՕՍ ԵՎ ԱԼԿԱՆՏԱ.

Տիկ. Պէրնէլ էլ Տիկ. (Ֆլիպօսին) Գնանք, Ֆլի-
պօս, գնանք, մի սոցանից աղատվիմ:

Էլմիր. Այնպիսի քայլերով էք գնում, որ
դժուարանում եմ ձեզ հասնել:

Տիկ. Պէրնէլ էլ Տիկ. Բաւական է, սիրելի հարս,
բաւական է այսքան հեռու գաք: Աւելորդ է բոլո-
րովին:

Էլմիր. Ես կատարում եմ իմ յատուկ պարտ-
քըս. բայց, մայրիկ, ի՞նչի այդքան շտապեցիք գնար:

Տիկ. Պէրնէլ էլ Տիկ. Նորա համար որ ես չեմ
կարող ձեր կացութիւնը տեսնել: Ինձ այստեղ ոչ
ոք մարդու տեղ չէ գնում: Այս, ես ձեր մօտից
վշտացած եմ գնում, իմ ամեն խօսքին հակառակում
էք, ոչ ոք չէ յարգում ինձ, ամեն մինը իր խօսքն
է առաջ քշում: Այստեղ իսկ եւ իսկ Պէտօ *) թա-
գաւորի դուռն է:

*) Միջին գարերում մուրացկանները Փարիզում
իրանց զասակարդ ունեին, և այն զասակարգի աւագը

Դօրին. Միթէ . . .

Տիկ. Պէրնէկը. Դու մի սպասուհի ես, բայց լեզուդ չափից գուրս երկայն է եւ յանդուզն։ Դու ամեն բանի մէջ խառնվում ես, անշուշտ կարծիքդ յայսնելով։

Դամիս. Բայց . . .

Տիկ. Պէրնէկը. Դու յիմար ես, որդիս եւ այս ասում եմ քեզ ես՝ քո տատը, եւ հարիւր անդամ զգուշացրած եմ իմ որդուն՝ քո հօրդ, որ դու հօրդ համար միայն վիշտ եւ տանջանք պիտի լինիս։

Մարիան. Ես կարծում եմ . . .

Տիկ. Պէրնէկը. Հա, դու եւս նորս համեստափայլ քոյր, որ քաշվում ես անտեղի մի խօսք արտասանելուց, բայց ասում են, որ հանդարա ջուրը վտանգաւոր է. Լովիկ մնջիկ այնպիսի բաներ ես անում, որ ես բոլորովին ասում եմ։

Էջմիած. Ի՞նչ էք ասում, մայրիկ։

Տիկ. Պէրնէկը. Մի՛ նեղանար, հարս իմ, բայց քո վարմունքն եւս բոլորովին լաւ չէ։ Դու պիտի լսու օրինակ լինէիր։ Սոցա հանդուցեալ մայրը բոլորովին ուրիշ կերպով էր վարվում։ Դու զարդարանքով ես զբաղված, եւ այդ ես չեմ հաւանում, այնպէս ես հագնվում, կարծես իշխանուհի լինէիր։ Ով կամենում է միայն իր ամուսնին համելի լինել, նա պէտք չունի, սիրելի հարս, այդչափ զարդարվելու։

Կոչվում էր թագաւոր Պէտո—երեխ լատիներէն թու թագաւոր մեծ դժուարութեամբ էր կարողանում կառավարել իր հապատակներին—մորաց կաններին, ուստի ամենայն անբարեկարդ տունը համեմատում էին Պէտո թագաւորի զրան հետ։

Կղեան Բայց, տիկին, այս ամենից յետոյ . . .

Տիկ. Պէրնէկը. Զեզ, հարախա պարսն եղբայր, շատ եմ յարգում, սիրում, բայց եթէ այս ատան տէրը ես լինէի, ես ձեզ կինզրէի երբէք չմտնել մեր տունը։ Դուք անդադար ապրելու այնպիսի գաղափարներ էք քարոզում, որոնք լնդունելի չեն կարող լինել ազնիւ մարդիկների համար։ Ես ձեզ հետ անկեղծօրէն եմ խօսում, այս է սովորութիւնս, եւ ամենուին ես չեմ ծածկում ինչ որ սրտիս մէջ ունիմ։

Դամիս. Իսկ ձեր պարսն Տարտիւֆը շատ երջանիկ է ինարկէ։

Տիկ. Պէրնէկը. Առաքինի մարդ է, որին պէտք է լսէք։ Եւ ես զայրանում եմ, երբ ձեզ պէտք նենթերը համարձակում են նորան ծաղրել։

Դամիս. Ուրեմն ես պէտք է լսեմ հա՞, երբ մի գարշելի կեղծաւոր մեր վրա բռնաւորի իշխանութիւն է բանեցնում։ Եւ մենք պիտի չհամարձակեանք շարժվել, եթէ մեր բարերարը չբարեհաձէ թոյլ տալ։

Դօրին. Եթէ ամեն բանի մէջ նորան լսենք եւ նորս գաղափարներին հաւատանք, ինչ որ անեւ լու լինինք, ամեն բան մնդք կլինի, որովհետեւ նա ամեն բան դատապարտում է։

Տիկ. Պէրնէկը. Ի՞նչ որ դատապարտում է, իսկապէս դատապարտելի է։ Նա կամենում է առաջնորդել ձեզ գէպի երկնքի ճանապարհը եւ իմ որպիս ձեզ ամենքիդ պիտի ստիգէր նորան սիրել եւ յարգել։

Դամիս. Ոչ, մեծ մայրս, զուր է. ոչ հայրս, եւ ոչ ոք ուրիշ կարող է ինձ ստիգիկ, որ նորա հետ

բարեկամանամք: Խղճմտանքիս հակառակ կլարվէի,
եթէ ուրիշ կերպ խօսէի: Նա իր ներգործելու եղաւ-
նակով ինձ զայրացնում է. եւ ես վատ հետեւանք
եմ գուշակում եւ նորա ոտը այստեղից կարելու
համար կստիպլիմ խիստ միջոցին դիմելու:

Դօրին. Սրգարեւ վրդովեցուցիչ բան է տես-
նել, որ յանկարծ տան մէջ մի անձանօթ ոմն սկսեց
տան տէր դառնալ, որ մի մուրացկան, որը մեղ մօտ
գալում՝ ոտը բորիկ, ցնցոտի հագուստով էր, իսկ
այժմ այնտեղ է հասել, որ մոռանում է իրան, ա-
մենքը նորան գերի են դարձել, եւ ինքն է միան
տէրը:

Տիկ. Պէր նէ շ. Էհ, ինչ ասեմ, ինարկէ
բոլորովին ուրիշ բան կինէր, եթէ ամեն բան կա-
ռավարվէր այս աստուածապաշտ մարդու խօսքով:

Դօրին. Նա ձեզ համար մի սուրբ է համար-
վում, իսկ ինձ համար նորա ամենայն դործը կեղ-
ծաւորութիւն է:

Տիկ. Պէր նէ շ. Տեսէք սորա լեզուն:

Դօրին. Սյո, թէ նորան եւ թէ նորա սպա-
սաւորին ամենեւին հաւատ չեմ ընծայում առանց
մի օրինաւոր երաշխաւորի:

Տիկ. Պէր նէ շ. Ես չեմ ճանաչում սպա-
սաւորին թէ ինչ է, սակայն պարոնի առաքինի մարդ
լինելու ես հաստատ գիտեմ: Դուք նորան վատ էք
ասում եւ ասում էք միայն այն պատճառով, որ
նա ձեզ ամենքիդ ճշմարտութիւն է ասում: Նորա
սիրաը վրդովում է մեղքերով եւ միայն երկնքի

ակնկալութիւնն է նորան դեկալարում:

Դօրին. Թող այդպէս լինի: Հապա ի՞նչ նա

չէ կարողանում տանել, մանաւանդ քանի մի ժա-
մանակից սկսած, որ մեր մօտ ոքմին հիւր գայց
Աղնիւ մի հիւր ի՞նչով է վիրաւորում երկինքը, որ
նա այնքան աղմուկ եւ աղաղակ է բարձրացնում,
գլուխներս տանելով: Եթէ կամենում էք, այս մա-
սին կարծիքս կյայտնեմ. մեր մէջ ասած լինի (ցոյց
տաղով էլմիրի վրա) հաւատացէք, որ նա նախանձ
է զգում տիկնով վերաբերմամբ:

Տ. Պէր նէ շ. Լոփ'ր, մի մտածիր թէ ի՞նչ ես
ասում: Մի՞թէ միայն նա է այդ այցելութիւնները
պահարակօղ: Հապա մի լսիր թէ ի՞նչեր են խօսում
շուրջդ . . . այցելուների գրտնչիւն, անդադար զրան
շարված կառքեր, այնքան սպասաւորների աղմկալի
ժողով. անհաճելի երեւոյթ է բոլոր զբացիների հա-
մար, ես հաւատում եմ ինարկէ, որ ոչինչ վատ
բան չկայ, սակայն արդէն վատ է այն, որ այդ բանի
մասին խօսում են:

Կ շ և ն ս. Բայց ինչպէս կարելի է, տիկին,
արգելել, որ չխօսեն: Կեանքի մէջ ցաւալի բան կի-
նէր, եթէ ոմանց լիմար զրոյցների պատճառով, մեր-
ժէինք մեր լաւագոյն բարեկամներին: Եւ մինչեւ
իսկ եթէ այդ եւս անէինք, կարծում էք թէ կարե-
լի է ստիպել ամենքին լոելու: Բամբասանքի առաջն
առնել կարելի չէ: Անմիտ զրոյցներին ոչինչ ուշք
դարձնելու չէ, աշխատենք ապրել վայելուչ կերպով
եւ շաղակարասներին կատարեալ ազատաթիւն տանք
խօսելու:

Դօրին. Եւ ո՞վքեր են վատաբանօղները.
մեր զբացի Դաֆնէ եւ նորա փոքրիկ այր մարդ
չեն մի՞թէ: Նոքա են միշտ ուրիշներին յատկապէս

վաստաբանում, որոնց վարքն արդարեւ պարսաւելի
է։ Մի փոքր յարգանքի նշաններ նկատելով դէպի
մի կին, զանազան անմաքուր մտքեր եւ լուրեր են
տարածում եւ հաւատայնում։ Ուրիշների գործերն
իրանց գոյներով ներկելով, կարծում են թէ իրանց
գործերը կարգարանան, այլեւ ամեն վատ ակնար-
կութիւններ եւ բամբասանքներ անելով, կամե-
նում են, որ իրանց անձնական արատները շատ աչ-
քի չնկնեն։

Տ. Պէր և կլ. Քո բոլոր գատաղութիւններն
անօգուտ են։ Յայսնի է, որ Դաֆնէ շատ օրինակելի
կեանք է վարում, միշտ Աստուծու կամքը կատա-
րելով։ Եւ ես խմացել եմ, որ նա եւս գատապար-
առում է ձեր կարգն ու սարքը։

Դօրին։ Հիմնալի օրինակ էք բերում, նա
լաւ կին է։ Ստոյգ է, որ նա խիստ կեանք է վա-
րում... Սակայն նորա բարեկաշտութեան պատ-
ճառը հասակն է, զիակն, որ ծերացած է եւ գե-
ղեցկութիւնը կորցրած։ Մինչեւ որ նա կարսղանում
էր սրտերը գրաւել, շատ լաւ էր օգտվում իր ար-
տօնութիւններից, բայց երբ իր աչքով տեսաւ, որ
իր գեղեցկութեան բոլոր հրապոյներն անհետացան,
կամեցաւ հեռանալ իրանից սառչօղ հասարակութե-
նից եւ իր մաշված գեղեցկութեան կնճիւները ծած-
կել բարձր խոնեմութեան եւ կեղծ բարեկաշտու-
թեան քօղի տակ։ Այսպիսի խորամանկութիւններ
են բանեցնում օրերն անցուցած, հին, պանասէր
կանացք, ցաւելով, որ երիտասարդներն այլ եւս ի-
րանց շուրջ չեն պատռում, եւ այսպիսի առանձնու-
թեան մէջ ատիպիած են դիմել սուտ աստուած-

պաշտութեանը։ Եւ ահա այս բարեկաշտ կանայքն
ամենայն խատութեամբ պախարակում են ամեն
բան, ոչինչ չեն ներում, եւ բարձրաձայն գննադա-
տում են ուրիշի կեանքը ոչ թէ մարդասիրութիւնից,
այլ նախանձից չկարողանալով տանել, որ մի երի-
տասարդուհի այն վայելչութիւններն ունենայ, որից
իրանք զրկվել են, իրանց հասակի պատճառով։

Տ. Պէր և կլ. Ահա այսպիսի դատարկախօ-
սութիւններն են հաձելի ձեզ, հարս իմ, եւ մենք
ստիպված ենք լսել, երբ աղախինն իր տիկնոջ ա-
ռաջ գատարկաբանում է ամերող օր։ Սակայն ես
եւս իմ կողմից պարտք եմ համարում խօսել եւ ա-
սել, որ իմ որդիս շատ խմաստուն կերպով վարվե-
ցաւ, այս աստուածապաշտ մարդուն իր տուն առ-
նելով, որին Աստուած ինքն է երեւի ուղարկել, որ
ուղղէ ձեր ամենքիդ մոլորված մտքերը, որին գուք,
ձեր փրկութեան համար, պարտական էք լսել. նա
պահարակում է այն միայն, ինչ որ արդարեւ պա-
խարակելի է։ Բոլոր այս այցելութիւնները, պարա-
հանդէմները, խօսակցութիւնները չար սկու՝ սա-
տանայի հնարած բաներ են։ Սցոսեղ երբէք մի բա-
րեկաշտ համեստ խօսք չես լսի. գատարկաբանու-
թիւն, երգեր եւ խեղկատակութիւններ, եւ շատ
անգամ ընկեր ընկերին է վատարանում, զրալարա-
լով թէ մէկին, թէ միւսին։ Վերջապէս խոնեմ մար-
դիկների գլուխները սկսում են ցաւել այսպիսի
խառնակ ժողովներից, որտեղ հազարաւոր զանազան
ծաղրածութիւններ են լսվում։ Անցեալ օր շատ լաւ
ասաց մի գոկտօր, թէ կատարեալ բարեկոնեան աշտա-
րակաշնութիւն է, իւրաքանչիւրն իր խելքին գօր



տալով, առանց միմեանց ուշք դարձնելու, եւ սկսեց ինձ ձշութեամբ պատմութիւն անել . . . Նայցէք, (Կղեանին ցոյց տաղով) այս պարոնն արգէն ծիծաւ զում է: Զեզ համար ուրիշ յիմարներ գտէք ծաղրելու: (Էղմիրին) Հապա . . . մասցէք բարով, իմ հարա Այլ եւս ոչինչ չունիմ ասելու: Առ այժմ այսքան եւս բաւական է ինձ. իմացէք, որ շատ ջուր կանցնէ, մինչեւ որ ոսս այստեղ դնեմ: (Ապտակ տաղով Ֆլիշին) Վեր, գնանք. հա դու քնած ես, մտաթափ ագուա: Այսքան: Յետոյ կողորեմ ականջներդ: Դէն, անցիր, գնա:

Բ. ԵՐԵՒԱՅԹ

ԿԱԷՍՆՏ ԵԽ ՊՈՐԻՆ

Կ շ է ա ն ս. Ես ամենեւին չեմ կամենում նորա հետ գնալ. գուցէ նորից կսկսէ ինձ հայհոյել: Ի՞նչ վայրենի կին է . . .

Դ օ ր ի ն. Ա՛խ, շատ ափսոս, որ նա չէ լսում ձեր այդ խօսքերը. նա ձեզ լսու նորհակալութիւն կյայանէր, կհասկացնէր ձեզ թէ իր հետ կատակ անել թոյլ տալու չէ:

Կ շ է ա ն ս. Բայց ի՞նչպէս զայրացաւ մեր դէմք եւ ի՞նչի նա այդքան սիրահարված է Տարտիւֆի վրա:

Դ օ ր ի ն. Ախ այս դեռ մեծ բան չէ: Հապա եթէ դորս որդուն՝ պ. Օրգօնին տեսնէիք, շատ կցաւէիք իհարիէ. նա խելացի մարդ է եւ իշխանին ծառայելիս քաջութիւն եւս ցոյց տուեց: Բայց Տարտիւֆի հետ մտերմանալուց յետոյ, կարծես

իսելքը կորցրած լինի: Նա Տարտիւֆին եղայր է կոչում եւ սրտանց սիրում է նորան, հարիւր անգամ աւելի քան թէ մօրը, որդուն, աղջկան, կնոջը: Նա նորա գաղանիքների միակ խորհրդապահն է, եւ նորա գործերի խոհեմ զեկավար: Տարտիւֆին վաղաքում է, համբուրում է, եւ գմուար թէ մի սիրուհու հետ աւելի քնքաբար կարելի լինի վարլել: Ճաշին նա նաստած պիտի լինի սեղանի գլխին: Նա պիտի ուտէ անչուշտ վեց մարդու չափ: Ամենալաւ կտորներ նորան պիտի մատուցանէ, եւ եթէ նորան պատահում է բղկալ, Օրգօնը նորան առողջութիւն է մաղթում: Մի խօսքով Տարտիւֆը նորա խելքը զիմից առել է, նա Օրգօնի համար ամեն բան է, նորա հերոսն է: Նա հիանում է նորա վրա, ամեն անգամ նորա խօսքերն է առաջ բերում: Նորա ամենաչնչին գործերը Օրգօնին հրաշքներ են երեւում եւ նորա ամեն մի բառն Օրգօնի համար պատղամախօսութիւն է: Տարտիւֆն հասկանալով, որ Օրգօնը նորան գերի է գարձել եւ կամենալով նորանից օգտվել, հարիւրաւոր ձեւերով ապշեցնում է նորան, եւ անդադար գումարներ է դուրս քաշում նորանից, եւ իրաւունք է համարում մեղ ամենքիս խծճել: Նորա բժամիտ սպասաւորն անգամ մեղ դասեր է տալիս եւ քարոզներ է ասում: Այն թշուառականն դուրս է ածում մեր շըջազգեստը, մեր ժապաւէնները. անցեալ օրն եւս պատուեց մի թաշկինակս, որը Սրբերի Ծաղկիների*)—Fleurs des Saints

*) Fleurs des Saints իսպանացի մի եզրիտի շարադրութիւն է:

գրքի մէջ էր, գոչելով թէ սարսափելի յանցանք
ենք գործում, խառնելով սրբութիւնը սատանայի
զարդարանքի հետ:

Գ. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ, ԴՕՐԻՆ, ԷԼՄԻՐ, ԴԱՄՄԻՍ ԵՒ ՄԱ-
ՐԻՑՆ

Եղմիր (Կշեանտին). Դու մեզանից աւելի
բաղդաւոր ես, որ չեկար չսեցիր, թէ ի՞նչեր էր
ասում զբանը կանգնած: Օրգօնին եւս այնտեղ տե-
սայ, նա չտեսաւ ինձ: Կղնամ վերեւ, կսպասեմ նո-
րա դալուն:

Կշեանտ. Իսկ ես նորան այստեղ կսպասեմ,
որ ողջունեմ:

Դ. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ, ԴՕՐԻՆ ԵՒ ԴԱՄՄԻՍ

Դամիս. Գոնէ զուք քրոջս ամուսնութեան
մասին փոքր ինչ տեղեկութիւն առէք. ինձ թուում
է թէ Տարտիւֆը հակառակ է ներգործում, եւ նա
է ստիպում հօրս այսքան յետաձգելու: Զեզ յայտնի
է թէ որքան վափագելի է այս զործը թէ ինձ, թէ
քրոջս եւ թէ Վալէրի համար: Ես եւս սիրում եմ
Վալէրի քրոջը, եթէ պէտք է . . .

Դօրին. Ահա նա զալիս է:

Ե. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ, ԴՕՐԻՆ ԵՒ ՕՐԳՈՆ

Օրգօն. Ա՛ն, բարով, եղբայր . . .

Կշեանտ. Շատ ուրախ եմ. նոր պիտի զուր-
գնայի, եւ ահա տեսնում եմ քեզ վերադարձած:
Գիւղն այժմ շատ ախորժելի չէ իհարկէ:

Օրգօն. Դօրին . . . (Կշեանտին) Ներողու-
թիւն, մի փոքր սպասեցէք ինպրում եմ, տան մա-
սին քանի մի տեղեկութիւն ստանամ: (Դօրինին)
Այս երկու օրն ամեն բան լաւ է անցել իհարկէ,
ի՞նչ են անում, ի՞նչպէս են:

Դօրին. Տիկին ձեր ամուսինն անցեալ օր
տենդ ունէք մինչեւ երեկոյ խիստ գլխացաւով:

Օրգօն. Իսկ Տարտիւֆը:

Դօրին. Տարտիւֆը բոլորովին քաջառողջ
է, հաստ ու պարարտ եւ գուարթ, եւ լաւ ուտումէ:

Օրգօն. Իե՞զմ մարդ:

Դօրին. Երեկոյեան տիկինն ախորժակ չու-
նէր եւ ընթրիքին ոչնչին ձեռք չտուեց, այն աստի-
ճան նեղացնում էր գլխացաւը:

Օրգօն. Հա, իսկ Տարտիւֆը:

Դօրին. Տարտիւֆը տիկինով ներկայութեամբ
միայնակ ընթրեց. եւ մեծ փառաբանութեամբ երկու
կաքաւ կերաւ եւ ոչխարի կողերից եւս քիչ մնաց:

Օրգօն. Իե՞զմ մարդ:

Դօրին. Ամբողջ զիշերը տիկինը չկարողա-
ցաւ աչքը փակել. կրակ կտրած այրվում էր, ան-
քուն: Տիկինով հետ մենք եւս մինչեւ առաւօտ ան-
քուն մնացինք:

Օրգօն. Հա, իսկ Տարտի՞ւֆը:

Դօրին. Տարտիւֆը՝ քաղցր նիրհելով կուշտ սեղանից քաշվելով իր սենեակը, եւ իր տաք անշկողնի մէջ փռված ամբողջ զիշերն անվրդով մէկ քռն քնեց:

Օրգօն. Խեղճ մարդ:

Դօրին. Վերջապէս մեր երկար համազելով, տիկնը թոյլ տուեց արին առնելու, եւ խակոյն թեթևութիւն դգաց:

Օրգօն. Հա, իսկ Տարտի՞ւֆը:

Դօրին. Տարտիւֆը պատշաճաւոր տղամարդութիւն արեց: Իր հոգին ամեն ցաւերի դէմ զօրացնելու համար, տիկնոջ առած արինի կորուսար վերականգնելու, նախաճաշին չորս մեծ բաժակ գինի փառաբանօրէն վայելեց:

Օրգօն. Խեղճ մարդ:

Դօրին. Վերջապէս այժմ երկուսն եւս լաւ առողջ են: Գնամ իմացնեմ տիկնոջ առաջապոյն, թէ ո՞րքան ուրախացած էք զուք նորա առողջանալուն:

Զ. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ ԵՒ ՕՐԳՈՆ

Կղեան. Եղայր, Դօրինը քթի տակից ծիծաղում է քո վրա, եւ առանց քեզ րարկացնելու ձշմարիսն ասելով, իրաւունք ունի: Մի՞թէ կարելի է, որ մարդ այդքան կամակորութեամբ ինքն իրան խարէ: Մի՞թէ հաւատոր է, որ մի մարդ այնքան գրաւէ քեզ, որ զու նորա համար ամեն բան մո-

ռանաս, որ նորան թշուառութենից ազատելուց յետոյ, այնտեղ համնէիր որ . . .

Օրգօն. Կանգնիր, սիրելիս. դու այն մարդու մասին ես խօսում, որին չես ճանաչում . . .

Կղեան. Չեմ ճանաչում, հա՞: Շատ կարելի է: Բայց վերջապէս նորան ճանաչելու համար թէ ինչպիսի մարդ կարող է լինել . . .

Օրգօն. Դու կհանացիր, սիրելիս, եթէ նորան ճանաչելիր, եւ հիացմանդ վերջ չէր լինի: Ահա մարդ. որը . . . Ախ, ի՞նչ մարդ է, վերջապէս այնպիսի մի մարդ է . . . մի խօսքով մարդ է: Վարվում է իր խօսքի համաձայն, վայելում է երջանիկ խաղաղութիւն, եւ ամբողջ աշխարհը մի աղբանոց է նորա համար: Ես բոլորավին փոխվում եմ նորա հետ խօսելիս, նա ինձ սովորեցրեց անստարեր լինել դէպի ամեն բան, դէպի ամեն բարեկամութիւնն եւ սէրը: Եթէ տեսնէի եղբօրս, զաւակներիս, մօրս, կնոջն մեռնելիս, ամենեւին հոգ չէի անի:

Կղեան. Ահա բոլորավին մարդասիրական զգացմունք:

Օրգօն. Ախ, եթէ տեսնէիր, ինչպէս առաջմն անգամ պատահեցի Տարտիւֆին, զու ինքդ ինձ պէս կրարեկամանայիր: Ամեն օր գալիս էր եկեղեցի եւ ճիշդ իմ հանդէպ ծնկաչոք աղօթում էր: Ամբողջ ժողովրդի աչքերն իր վրա էր զարձնում, Աստուծուն ուղղած իր աղօթքի չերմեռանգութեամբ: Երբեմն յուզվում էր, երբեմն խիստ հառաջում եւ հոգոց հանում եւ անդադար հնդութեամբ զետինը համբուրում: Իսկ երբ ես գուրս էի գալիս, նա ինձնանից առաջ էր շտապում եւ ինձ համար ժողովրդի մէջ ճանապարհ էր բա-

Նում: Վերջը իմացայ նորա ծառայից, որն ամեն բանի մէջ նմանում էր նորան, նորա ովլ լինելը եւ աղքատութիւնը եւ սկսեցի նորան օգնել: Բայց նա կամենում էր միշտ համեստութեամբ տուածիս կէսը ինձ դարձնել. „տուածիտ կէմ եւս շատ է ինձ համար—ասում էր,—ես արժանի չեմ ձեր կարեկցութեանը“: Եւ եթէ յետ չէի վերցնում, նա աչքին առաջ աղքատներին էր բաժանում: Վերջապէս Աստուծու ողբարձութեամբ կարողացայ նորան իմ տունս փոխազրել, եւ ահա այնուհետեւ ամեն բանի մէջ կարծես բարեկազդութիւն է տիրում: Տեսնում եմ, որ նա ամեն բան արգելում է, մինչեւ անդամ կնոջս, ի պատիւ իմ, առանձին ուշք է դարձնում: Նա ինձ հաղորդում է, եթէ մարդիկ ծուռ հայեացք են ձգում կնոջս վրա, եւ ինձանից շատ աւելի նաշխանձախդիր է: Դուք չէք կարող երեւակայել թէ որ աստիճանի է համում նորա բարեպաշտութիւնը: Նա իր համար յանցանք է համարում ամենաչնչին մի գործ: Մի ոչինչ բան արգէն նորան վշտայնում է: Օրինակ անցեալ օր իրան մեզազրում էր նորա համար, որ բոնել էր մի լու, իր աղօթքի միջոցին, եւ սպանել էր բարկացած:

Կ լ է ա ն ս. Ո՞հ, տէր Աստուած, կարծես գու խելեղարդած լինիս: Այդ խօսքերով մի՞թէ ծաղրում ես ինձ: Եւ ինչ ես կարծում, մի՞թէ բոլոր այս կատակը . . .

Օ ր զ օ ն. Եղբայր, քո ասածդ ամբարշտութեան նշան է: Հոգիդ ամբարշտութեամբ վարակված է: Եւ ինչպէս որ ես մի տասն անդամ ասած եմ, պիսիդ մի վատ բան պիտի գայ:

Կ լ է ա ն ս. Դա քո նմանների սովորական խօսակցութիւնն է: Նորա կամենում են, որ իւրաքանչիւրը նոցա պէս կոյր լինի: Ով որ արդարութեամբ է դատում, նա ամբարիշտ է: Ով որ մնուի գլուխ շարժել եւ ձեռներ տարածել չունի, նա ոչ հաւատ, ոչ յարգանք ունի գէպի սրբազնն իրերը: Քո խօսքերը, եղբայր, ինձ ամեննեւին չեն վախեցնում: Ես գիտեմ, ինչ որ ասում եմ եւ Աստուած անմուռմ է իմ սիրալ: Ես գերի չեմ զանայ կեղծաւորներին: Կան սուտ աստուածապաշտներ եւ սուտ քաջեր. ինչպէս որ ձշմարիտ քաջերը նոքա չեն, որոնք շատ աղմուկ են հանում, նոյնպէս օրինակ լինելու՝ բարի եւ ձշմարիտ աստուածապաշտներ նոքա չեն, որոնք այդքան խեղկատակութիւն են անում: Լաւ, մի՞թէ գու ոչինչ զանազանութիւն չես անում կեղծաւորութեան եւ աստուածապաշտութեան մէջ: Դու կամենում ես նոցա հետ միեւնոյն կերպով վարվել, միեւնոյն յարգանք մասուցանել զիմակին եւ գէմքին, միեւնոյն աչքով նայել կեղծիքին եւ անկեղծութեան, չփոթել արտաքին ցոյցը ձշմարտութեան հետ, մի զին զնել ուրուականին եւ կենդանի անձնաւորութեան, կեղծ գրամին եւ իսկականին: Մարդիկ շատ օտարուի են, արդար բնաւորութիւն շատ սակաւ է պատահում, բնականի հետքերն անշամ ոչնչացնելով, այսանզակ մի բան են զանում: Եւ ամեն աղնիւ բանը նոքա յաձախ ծայրայեղութեամբ փչացնում են չափն անցնելով: Այս ամենն, եղբայր, թող անցողակի ասած լինիմ քեզ:

Օ ր զ օ ն. Այս, ի հարկէ գու շատ յարգելի վարդապետ ես, աշխարհի գիտութիւնն ամբարած

ունիս քո մէջ։ Դու միակ խելացի եւ լուսաւորված մարդ ես, զու մեր դարի պատգամախօս ես, մեր կատօն ես։ Իսկ մենք ամենք յիմարներ ենք . . .

Կ շ է ա ն ս. Ես, եղբայր, ամենեւին յարգելի ուսուցչապետ չեմ եւ ոչ մեծ գիտութիւն ունիմ ամբարած, բայց մի խօսքով ասեմ, իմ բոլոր գիտութիւնս այնքան է, որ զիտեմ զանազանել սուտը ճշմարտից, եւ ինչպէս որ ճշմարիստ աստուածապաշտներից առաւել յարգելի հերոսներ եւ անկեղծ սուրբ զգացմունքից առաւել աղնիւ եւ գեղեցիկ բան չգիտեմ աշխարհիս մէջ, նոյնպէս ոչինչ այնքան զգուելի չէ, որքան ձեւական արտաքին կեղծ եռանդը, որքան այս յայտնի խարերաներն, այս տեղական աստուածապաշտները, որոնց սրբապիղը եւ խարերայ խելկատակութիւնը, ծաղրելով ամեն բան, օգուտ է քաղում անպատճիժ, իր հաճոյքի համաձայն, այն ամենից, ինչ որ մահկանացուների համար ամենասուրբ եւ ամենանուրբական բան կայ։ Այս մարդիկն իրանց շահախնդիր հոգով աստուածապաշտութիւնը շինել են իրանց արհեստ եւ առուտուր, եւ կամենում են աչքերը դէպի վեր բարձրացնելով եւ շինծու հառաջանքներով պաշտօններ. Եւ աստիճաններ ձեռք բերել. այս մարդիկը, որոնք արտասովոր եռանդով, Աստուծու անուն տալով եւ երեսը խաչ հանելով, հարսաւոթեան եռեւից են վաղում, որոնք կեղծ եռանդով եւ աղօթելով ամենաբարձր տների մէջ մուտք են գործում եւ պատգամներ են տալիս, որոնց արաւները հաշտ ապրում են իրանց կեղծ բարեպաշտութեան հետ, որոնք խորամանկ են, վրէժինալիր, անհաւատ, կեղծուալատիր եւ միւ-

նին կործանելու համար, յանդինաբար քօղարկում են իրանց ատելութիւնը երկնային նպատակով։ Իսկ նոցա բարկութիւնն առաւելապէս վտանգաւոր է մեզ համար նորանով, որ նոցա դէնքը մեզ համար նուիրական է, եւ մեզ հարուածում են իրբեւ թէ մեր մեղքերի համար սրբազն սրով. այս կեղծ բնաւորութիւնը յայտնապէս է երեւում նոցա մէջ։ Իսկ անկեղծ աստուածապաշտներին դժուար չէ ճանաչել. Մեր մէջ օրինաւոր եւ օրինակելի մարդիկն իսկոյն աչքի են լնկնում։ Ահա Արփատօնը, ահա Պէրփանդրը, Օրօնար, Ալմիդամասը, Պոլիդօրը, Կլիտանդրը։ Սոցա պատիւր ոչ ոք երբէք չի շօշափի, սոքա առաքինութեան շաղակրասներ չեն։ Նոքա չզիտեն այն զգուելի կեղծիքը, եւ նոցա բարեպաշտութիւնը մարդավարի է ու ներողամիտ։ Նոքա չեն քննադատում մեր բոլոր գործողութիւնները, եւ գոռողութեամբ չեն ուղղում թերութիւնները։ Բառերի շուայլութիւնն ուրիշներին թողնելով նոքա իրանց գործերով են յանդիմանում մեր վարմունքը։ Զարիքը միայն արտաքրուստով չեն դաստում, այլ քննում են հոգու տրամադրութիւնը։ Նոքա չեն դիմում ոչ որոգայթներին, ոչ գաւազրութեան, այլ նոցա ցանկութիւնն է լաւ կողմը տեսնել։ Նոքա երբէք չեն ատում մեղաւորին կատաղաբար, նոքա ատում են միայն մեղքը, եւ Աստուծուն ծառայում են միայն այնքան եռանդով, որքան որ ինքն է պատուիրում. ահա սոքա են մարդիկ, սոքա են օրինակ, որոնց պէտք է նմանել։ Իսկ քո Տարտիւֆը, ճիշդն առած, ամենեւին այս տեսակ չէ. դու զուր

Ես գովզում նորա բարեպաշտութիւնը. տեսնում եմ,
որ դու կուրացած ես նորա կեղծաւորութեամբ:

Օր գօն. Դէհ, ամեն բան ասացիր, վերջաց-
րիր արգեօք:

Կշեանս. Այս:

Օր գօն. (Դուրս գալով) Խոնարհ ծառայ եմ:
Կշեանս. Ինդիմ, մի խօսք դարձեալ: Թող-
նենք այս վէճը, յիշում ե՞ս, որ Վալէրին խօսք ես
տուել, որ պիտի փեսայացնես:

Օր գօն. Այս:

Կշեանս. Դու պսակի օրն եւս որոշած էիր:
Օր գօն. Ճշմարիս է:

Կշեանս. Ուրեմն ի՞նչի ես յետաձգում:

Օր գօն. Զգիտեմ:

Կշեանս. Շատ կարելի է արգէն ուրիշ
միտք ունիս:

Օր գօն. Կարելի է:

Կշեանս. Ուրեմն մերժում ես խոստումք:

Օր գօն. Ես այդ չասացիր:

Կշեանս. Կարծեմ, ոչինչ արգելք չէ կարող
լինել, որ խոստումք կատարեն:

Օր գօն. Նայելով հանգամանքին:

Կշեանս. Մի բառ ասելու համար, ի՞նչ հար-
կաւոր է այդքան ծանր ու բարակ խօսքիր: Վալէրին
ինձ ինդիմց, որ քեզ հետ այս մասին խօսեմ:

Օր գօն. Փառք Աստուծուն:

Կշեանս. Ուրեմն ի՞նչ ասեմ նորան:

Օր գօն. Ի՞նչ որ կամենում ես:

Կշեանս. Բայց պէտք է վերջապէս քո
միտքն իմանալ: Ի՞նչ է միտքդ:

Օր գօն. Այս անել, ինչ որ Աստուծած կկա-
մենայ:

Կշեանս. Վերջապէս խօսենք պարզօբն:
Վալէրլ իր խօսքի տէրն է: Իսկ դու պիտի կատա-
րիսս խօսքդ թէ ոչ:

Օր գօն. Մնաս բարով:

Կշեանս. (Միայն) Վալէրլ սիրում է, բայց
նորա գործը լաւ չէ գնում: Այս պէտք է հաղոր-
դեմ նորան:

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ԵՐԵՒԱՅԹ

ՕՐԳՈՆ ԵՒ ՄՍ.ՐԻՍ.Ն

Օր գօն. Մարիան:

Մարիան. Ի՞նչ կաց, հայրիկ:

Օր գօն. Մօտ եկ, կամենում եմ քեզ հետ
խորհրդաբար խօսել (նայում է դրան ետեւ):

Մարիան. Ի՞նչ էք պտռում:

Օր գօն. Նայում եմ մի՛ գուցէ ոք մին մեզ
ականջ դնէ: Այստեղ սոլոր են լսելու: Այժմ հան-
գիտ ենք: Ես քո մէջ, Մարիան, միշտ քաղցր
բնութիւն եմ տեսել եւ դու միշտ սիրելի ես եղել
ինձ:

Մարիան. Ես շատ ուրախ եմ. ո՛րքան,
թանկ է հայրական սէրլ:

Օր գօն. Շատ լաւ ասացիր, դստրիկ իմ, եւ
այդ սէրին արժանի լինելու համար, դու պիտի մտա-
ծես իմ ցանկութիւնս կատարելու:

Մարիան. Ոչ, այդ իմ ամենամեծ մկնիթաւութիւն եմ համարում:

Օրգոն. Շատ լաւ: Ուրեմն ասա ինձ. Ի՞նչ կարծիք ունիս Տարտիւֆի՝ մեր հիւրի մասին:

Մարիան. Ո՞վ: Ե՞ս:

Օրգոն. Այս, գու: Լաւ նայիր թէ ինչ պիտի պատասխանես:

Մարիան. Նորա մասին կասեմ այն ամենն, ինչ որ ձեզ հաճելի կլինի:

Բ. ԵՐԵՒԱՅԹ

ՕՐԳՈՆ, ՄՍՐԻՄՆ ԵՒ ԴՈՐԻԿ

(Մժնում է Դօրինը կամաց եւ կանգնում է Օրգոնի ետև առանց նորան երեւելու):

Օրգոն. Խելացի ես խօսում: Ուրեմն ասա ինձ, դստրիկո, թէ նա արժանաւորութիւններ ունի, թէ նա գրաւում է քո սիրալ եւ թէ քաղցր կլինէր քեզ համար, որ իմ ընտրութեամբ նորա հետ ամուսնայիր:

Մարիան. Ի՞նչ:

Օրգոն. Հը... .

Մարիան. Ի՞նչ էք հրամայում:

Օրգոն. Ուրեմն:

Մարիան. Ինձ երեւեցաւ թէ...

Օրգոն. Ի՞նչպէս:

Մարիան. Ում համար ասացի՞ք, հայրիկ, թէ գրաւել է սիրալ եւ թէ քաղցր կլինէր ինձ, ձեր ընտրութեամբ, նորա հետ ամուսնանալ:

Օրգոն. Տարտիւֆի համար:

Մարիան. Ո՞չ, հայրիկ: Երբէք այդպիսի բան չկար: Երգուում եմ ձեզ: Ի՞նչի էք ստիպում ինձ այդպիսի սուս ասել:

Օրգոն. Սյատեղ սուս չկայ. կամենում եմ, որ այս ձշմարիտ լինի եւ սա բաւական է կարծեմ իմ վճիռ որոշելու:

Մարիան. Ի՞նչպէս. գուք կամենում էք, որ ես...

Օրգոն. Այս ես կամենում եմ այս պատկով Տարտիւֆին իմ ազգական դարձնեմ. նա քո ամուսին պիտի լինի, ես այդ վճուած եմ: (Դօրինին տեսնելով) Ի՞նչի գու այստեղ ես: Այդ ի՞նչ հետաքըրքրութիւն է, գալ գաղտնի ականջ դնել մեզ:

Դօրին. Ես գիտեմ, թէ այդ ինչ զրոյց է. Անթագրութիւն է արդեօք թէ իրողութիւն: Բայց ես եւս լսեցի այդ լուրը, եւ ի հարկէ գատարկ խօսքեր համարեցի:

Օրգոն. Դատարկ խօսքեր են: Ուրեմն անհաւատալի բան է, հա՞:

Դօրին. Այն աստիճանին անկարելի է, որ ձեզ եւս, պարոն, չեմ հաւատում:

Օրգոն. Ես լսւ միջոց ունիմ քեզ հաւատացնելու:

Դօրին. Այս, այս, գուք ծիծաղելի պատմութիւն էք անում:

Օրգոն. Ես պատմում եմ այն, ինչ որ շուտով կտեսնէք:

Դօրին. Զուր բան է:

Օրգոն. Ինչ որ ասեմ, դստրիկո, լրջօրէն եմ ասում:

Դօրին. (Մարիանին) Մի՛ հաւատաք, օրիւ-
որդ, ձեր հայրը կատակ է անում:
Օրգօն. Ես քեզ ասում եմ...

Դօրին. Ասացէք, բայց անհաւատալի բան է:
Օրգօն. Վերջապէս, զայրացնում ես ինձ...
Դօրին. Շատ բարի, հաւատանք ձեզ, բայց
աւելի վատ է ձեզ համար. որովհետեւ անկարելի է,
որ ձեզ պէս խելացի համարված եւ պատկառելի
մօրուքով մի մարդ այնքան անմիտ լինի, որ կա-
մենայ...

Օրգօն. Լոյր, երկար համբերեցի, բաւա-
կան է:

Դօրին. Խօսւնք առանց բարկանալու, խընդ-
րեմ: Ովքեր են այդ գաւաղբութիւն սարքել: Ձեր
աղջիկը մի կեղծաւորի բաժին չէ: Թող նա ուրիշ
տեղերից պառէ: Եւ ի՞նչ պիտի բերէ ձեզ այդ ա-
մուսնութիւնը: Ի՞նչ գիտ է զա, ձեր մեծ հարատու-
թեամբ գնալ ընտրել մի աղքատ վեսայ...

Օրգօն. Դու չես հասկանում: Նորա աղքա-
տութեան մէջ է նորա պատիւը, նորա թշուասու-
թիւնը պատուաւոր է, նա զրկվել է իր հարատու-
թենից, որովհետեւ ամենեւին չէ մտածում երկաւ-
որ բարիքների մասին, այլ ձգում է միշտ գէպի
երկնային յաւիտենական բարիքը: Բայց ես կօգնեմ
նորան այս դժուարութենից աղատվելու եւ իր
հալստութիւնը ձեռք բերելու, թէպէտ առանց սո-
րան եւս նա աղնուական է:

Դօրին. Այդ բոլորը ինքն է ասում: Այդ
մնապարծութիւնը չէ համաձայնում աստուածպաշ-
տութեան հետ: Սբառաքին երեւոյթով նա գէպի եր-

կինք է սլանում, սակայն իր բոլոր խորհու ները
երկրային են: Գիտեմ—խօսքերս ձեզ հաճելի չեն:
Ազնուականութիւնն իր տեղը մնայ, խօսենք նորա
անձի վրա: Մի՞թէ ձեր աղջիկն այդպիսի մարդուն
պիտի տաք: Մի՞թէ չէք մտածում պատշաճաւորու-
թեան մասին եւ թէ ի՞նչ հետեւանք են ունենում
այդպիսի ամուսնութիւնները: Պիտի իմանաք, որ
աղջկան առաքինութիւնը փորձութեան վտանգին է
հանդիպում, երբ իր ցանկութիւնն հակառակ է ա-
մուսնանում, եւ երբ գէպի այր մարդը սէր չկայ,
ամուսնական կազը սնկարող է կնոջը սահմանա-
րել, եւ այդ սէրն ուրիշն է յափշտակում: Եւ ո՞վ է
յանցաւոր, երբ հայրը բռնի է պսակում: Ուրեմն
մտածեցէք թէ ի՞նչ վտանգներ պիտի առաջ բերէ
ձեր ցանկութիւննը:

Օրգօն. Ահա մի փելիսովիայ, որ կամենում
է ինձ ապրել սովորեցնել:

Դօրին. Եթէ ինձ լոէիք, առաւել լաւ կի-
նէր երեւի ձեզ համար:

Օրգօն. (Մարիանին). Այս առակները լսե-
լու չէ: Ես քո հայրդ եմ, եւ գիտեմ ինչ որ քեզ
պէտք է: ... Թէեւ վալէրին խօսք եմ տուած...
բայց նա թուղթ խաղացօղ է, եւ միեւնոյն ժամա-
նակ աստուածապաշտ չէ, նորան երբէք չեմ տես-
նում, որ եկեղեցի գնար:

Դօրին. Դուք կամենում էք, որ նա նշա-
նակված ժամերին վաղէր եկեղեցի նոցա պէս, որմնք
եկեղեցի են զնում միայն իրանց ցոյց տալու համար:

Օրգօն. Ես այստեղ քո կարծիքը չեմ հարց-
նում: (Մարիանին). Դու հասկացար, Տարտիքը

բոլորովին ասուուածապաշտ է, իսկ այդպիսի ամուսինը մի գանձ է: Դուք բազզաւոր կլինիք, դու կակսես նորան սիրել եւ կապրէք առանց կռուելու իրեւ աղաւնիներ: Այլեւ դու կարող ես նորան դարձնել ինչ որ կկամնաս:

Դօրին. Դարձնել չե կարողանայ նորան, բայց լիմարացնել՝ այս:

Օրգօն. Ի՞նչեր է դուրս տալիս:

Դօրին. Ես բան եմ ասում, որ այդպիսի մարդը միայն վատ ազդեցութիւն կունենայ ձեր աղջկան վրա:

Օրգօն. Ի՞նչ ես ինձ ընդհատում, լոիր: Ի՞նչ ես խառնվում քեզ չվերաբերված դործի մէջ:

Դօրին. Ես միայն ձեր օգուան եմ ասում:

Օրգօն. Աւելորդ է բոլորովին, լոիր:

Դօրին. Ախ, եթէ ես ձեզ չփրէի:

Օրգօն. Շատ պէտք է ինձ քո սէրը:

Դօրին. Ես պիտի սիրեմ ձեզ: Ես կվշտանամ, կցաւիմ, երբ կակսեն ծալրել ձեզ:

Օրգօն. Ախ, պիտի չուես միթէ:

Դօրին. Լաւ խղճմտանք է այդպիսի ամուսնութիւն գլուխ բերելը:

Օրգօն. Իժի ծնունդ, վերջապէս պիտի լոե՞ս թէ ոչ:

Դօրին. Ախ, դուք բարեպաշտ էք, բայց ի՞նչպէս բարկանում էք:

Օրգօն. Ո՞վ չե զայրանայ այդպիսի անմտութիւնները լսելով: Վերջապէս պատուիրում եմ, որ լսես . . .

Դօրին. Կլսեմ, շատ լաւ, սակայն միշտ միեւնոյնը պիտի մտածեմ:

Օրգօն. Այդ կարող ես, սակայն խօսել՝ ոչ երբէք: (Մարիամինին). Ուրեմն գործը վճռված է. մի՛ ընդդիմանար: Ես ամեն բան խորհած ե՞մ լըջօրէն:

Դօրին. (Մի կողմ) Կատաղում եմ, որ չեմ կարող խօսել:

Օրգօն. Տարտիւֆը թէեւ գեղեցիկ չէ, բայց եւ այնպէս . . .

Դօրին. (Մի կողմ) Լաւ հրէշ է:

Օրգօն. Եթէ նորա բոլոր ուրիշ յատկութիւններին անզամ չհամակրէիր . . .

Դօրին. (Մի կողմ) Նա հիանալի մարդ է... (Օրգօնը դատնում է Դօրինին, ձեռները ծալած լսում է, նայելով նորան): Եթէ ոքմին բոնի ինձ հետ ամուսնանար, ես նորան անպատիժ չի թողնի: Ես նորան շուտ ցոյց կտայի, թէ կինը կարող է միշտ իր վրէմն առնել:

Օրգօն (Դօրինին). Ուրեմն ինձ այստեղ ոչ ինչ նշանակութիւն չէք տալիս:

Դօրին. Ի՞նչի էք զրգուվում, ես ձեզ հետ չեմ խօսում:

Օրգօն. Հապա ի՞նչ ես անում, եթէ չես խօսում:

Դօրին. Ես ինձ ու ինձ եմ խօսում:

Օրգօն. (Մի կողմ) Զէ, տեսնում եմ, քեզ դաս պէտք է իմ ձեռովկ: (Այնպէս է կանգնում, որ յարւար լիներ Դօրինին խվել, եւ դսեր հետ խօսելիս, նայում է Դօրինին). Սիրելի դուստր, պիտի

համաձայնես: Կարծել թէ իմ ընտրած ամուսինը . . .
(Դօրինին) Դու ի՞նչի չես խօսում:

Դօրին. Ես բան չունիմ ասելու:
Օր զօն. Գոնէ մի խօսք:
Դօրին. Չեմ ցանկանում:
Օր զօն. Ես քեզ դիտում եմ:
Դօրին. Այդքան յիմար չեմ:
Օր զօն. (Մարիանին) Յոյս ունիմ, որ շու-
տով միտք կփոխես, եւ իմ վճիռը կընդունես:

Դօրին. (Հեռանալող) Ինձ ծաղրելի է երե-
ւում այդպիսի փեսացուն:

Օր զօն. (Մարիանին) Ազափինդ ժանտախտ
է. սորա հետ փորձանքին կհանդիպէ մարդ. Ես
վրդովված եմ նորա յանդուզն խօսքերով. Փոքր
ինչ հանգարտելու համար, պէտք է գնամ զբօնեմ
մաքուր օդի մէջ:

Գ. ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԻԱՆ ԵՒ ԴՕՐԻՆ

Դօրին. Մի՞թէ համր էք, որ ձեր տեղ ես
պիտի պատերազմէի. Զարմանալի է. հանգիստ լսել
այդպիսի ամսիստ առաջարկութիւնն եւ մերժելու ոչ
մի խօսք չասե՞լ:

Մարին. Ի՞նչ պիտի անեմ, երբ հայրս
ստիպում է:

Դօրին. Ի՞նչ պիտի անէք: Պատասխանեցէք
ի՞նչպէս որ պէտք է:

Մարին. Ի՞նչպէս:

Դօրին. Պէտք է ասել թէ ուրիշի սրտով
չէ կարելի սիրել, թէ գուշ ձեզ համար էք ամուս-
նանում եւ ոչ նորա համար, թէ ամուսինը ձեզ պիտի
հաճելի լինի եւ ոչ նորան: Եւ եթէ Տարախիքը իրան
սիրելի է, թող ինքն ամուսնանաց նորա հետ:

Մարին. Մի՞թէ կարելի է հօրն այդպիսի
պատասխան տալ. հայրը իրաւունք ունի:

Դօրին. Վալէրը ձեզ առաջարկութիւն արեց:
Ասացէք. նորան սի՞րում էք թէ ոչ:

Մարին. Դօրին, քո կասկածելով դու ա-
նկրաւութիւն ես անում: Քանիցս սիրոս բացել եմ
քո առաջ, եւ մի՞թէ զու չգիտես թի ի՞նչ բուռն
կերպով սիրում եմ Վալէրին:

Դօրին. Ի՞նչ ասեմ. իմ մէջս կասկած է
ծնվում թէ որքան խորին է այդ ձեր մէրը:

Մարին. Դօրին, ցաւում եմ, որ այդպիս
ես խօսում, զգացմունքս յայտնի են:

Դօրին. Ուրեմն սիրում է՞ք նորան:

Մարին. Պաշտում եմ:

Դօրին. Ես եւս ձեզ սիրում է:

Մարին. Այս, կյուսամ:

Դօրին. Եւ երկուսդ եւս ցանկանում է՞ք
շուտ ամուսնանալ:

Մարին. Անուշտ:

Դօրին. Իսկ միւս պատկի մասին ի՞նչ էք
մտածում:

Մարին. Ես կսպանեմ ինձ, եթէ կսփառեն:

Դօրին. Ահա լաւ միջոց գտաք... կարծես
թէ մահը միակ վրկութիւն է: Կարելի է մի՞թէ լսել
այդ խօսքերն առանց զայրանալու:

Մարիան. Տէր Աստուած, ի՞նչի այդչափ
անկարեկից ես դէպի մարդիկ:

Դօրին. Ես չեմ կարող կարեկցել, երբ դուք
ձեզ չեք կարեկցում:

Մարիան. Ի՞նչ անեմ, որ ես վախկոս եմ:

Դօրին. Մէրը առանց հաստատամութեան
ոչինչ միտք չունի:

Մարիան. Միթէ Վալէրը ինքը պիտի չպա-
հանջէր հօրիցս, նա պիտէ իմ խորին սէրը:

Դօրին. Երբ ձեր հայրն այնքան թոյլ է, որ
Տարտիւֆը կարող է նորա միտքը փոխել տալ եւ
մոլորեցնել, Վալէրն ի՞նչ մեղք ունի այստեղ:

Մարիան. Բայց եթէ ես մերժեմ եւ բաց-
ասեմ, մոռանամ կուսական ամօթխածութիւնս,
դատեր պարտականութիւնս, միթէ կամենում ես,
որ ամբողջ աշխարհն սկսէ ինձ բամբասել:

Դօրին. Ոչ. Ես ոչինչ չեմ կամենում: Տես-
նում եմ, որ դուք կամենում էք տիկին Տարտիւֆ
դառնալ: Ի՞նչի միտք պղտորեմ: Վատ բան չէ:
Միթէ Տարտիւֆը բարքով, խելքով լաւ փեսացու
չէ: ով կարող է նորան հաւասարվել: Քիչ պատիւ
չէ նորա կին լինել: Նա շատ յայտնի անձն է, աղ-
նուական է իր տան մէջ, բաւական սիրուն, յարգ-
ված: Գոն կլինիք ի հարկէ նորա կին լինելով:

Մարիան. Ոչ Աստուած:

Դօրին. Գեղեցիկ մարդու կին դառնալը
միթէ պատուարեր չէ:

Մարիան. Մի՛ խօսեր այդպէս: Ես քեզա-
նից եմ սպասում խորհուրդ, օգնութիւն: Ամեն բան
վերջացած է, այժմ ես ամեն բանի պատրաստ եմ:

Դօրին. Ոչ, դուսալը պարտական է հնա-
զանդել հօրը, եթէ հայրը կապիկի հետ եւս ամուս-
նացնէր: Բաղդաւոր վիճակ կունենաք, ի՞նչի էք
վշտանում: Կառքով կտանէ ձեզ իր հայրենի քա-
ղաքը: Այստեղ կսկսէք նորա բազմաթիւ աղքա-
կանների հետ ծանօթանալ, մեծամեծներին ացելել,
ինջոյքների եւ պարահանողէմների մէջ ուրախ կեանք
վարել....

Մարիան. Դու ինձ սպանել ես կամենում:
Սոսա ինչ պիտի անեմ:

Դօրին. Ի՞նչ կարող է ասել ձեր սպասուհին:

Մարիան. Դօրին... ինդրում եմ:

Դօրին. Թող ամենքը իմանան. ձեզ պատ-
ժելու է....

Մարիան. Միրելի Դօրին...

Դօրին. Ոչ:

Մարիան. Ես վճռական պատասխան կտամ..

Դօրին. Զոր է: Դուք արդէն Տարտիւֆի
հետ նշանված էք:

Մարիան. Ես քեզ հետ միշտ անկեղծ եմ
եղել, Դօրին, ինդրում եմ...

Դօրին. Ոչ, դուք պիտի տարտիւֆանաք:

Մարիան. Ուրեմն այդպէս անտարբեր ես
դէպի ինձ, թող ես յուսահատվիմ: առանց քեզ եւս
կարող եմ օգնութիւն գտնել: (Կամենում է դուրս
գնայ:)

Դօրին. Բայց եւ այնպէս սպասեցէք. ճշշդն
ասեմ. ինայում եմ ձեզ...

Մարիան. Նայիր, Դօրին: Եթէ ինձ այդպէս
պիտի չարչարէք, աւելի լաւ է մեռնեմ:

Դօրին. Մի՛ զայրանաք. դեռ եւս կարող
ենք ամեն բան ուզգել. Ահա ձեր սրտակից վալերն
եւս զալիս է:

Դ. ԵՐԵՒՈՅԹ

ՄԱՐԻԱՆ, ԳՈՐԻՆ ԵՒ ՎԱԼԻՔ

Վաշեր. Ախորժ մի լուր հաղորդեցին ինձ
նոր . . .

Մարիան. ի՞նչ լուր:

Վաշեր. Որ գուք ամուսնում էք Տար-
տիւֆի հետ:

Մարիան. Այս, հայրս այդպիսի միտք է
յդացել:

Վաշեր. Զեր հա՞յրը:

Մարիան. Այս, իր միտքը փոխել է եւ այս
բոպէիս այդ ինձ յայտնեց:

Վաշեր. Իսկ գուք ի՞նչ էք մտածում:

Մարիան. Ես չգիտեմ:

Վաշեր. Գեղեցիկ պատասխան է . . . Ուրե-
մն դուք չգիտեք:

Մարիան. Ոչ . . .

Վաշեր. Ո՞չ:

Մարիան. Դուք ինձ ի՞նչ խորհուրդ կտաք:

Վաշեր. Իմ խորհուրդս է անմիջապէս հա-
մաձայնել . . .

Մարիան. Դուք այդ խորհուրդ էք տա-
մա ինձ:

Վաշեր. Այս:

Մարիան. Կատակ չէ՞ք անում:

Վաշեր. Ընտրութիւնը փառաւոր է եւ պէտք
է լսել:

Մարիան. Զեր խորհուրդը ընդունում եմ:
Վաշեր. Տեսնում եմ, որ գուք համաձայն
էք առանց դժուարութեան:

Մարիան. Ես կամենում եմ ձեր խորհուրդը
լսել . . .

Վաշեր. Ես այդ խորհուրդը տուի ձեզ հա-
ճելի լինելու . . .

Մարիան. Ես եւս կլսեմ ձեր հաճոյքը կա-
տարելու:

Դօրին. (Հեռու զնալով) Տեսնենք, ի՞նչպէս
պիտի վերջանայ այս խաղը:

Վաշեր. Ահա այդ է ուրեմն ձեր սէրը. խա-
բէութիւն էր, երբ գուք . . .

Մարիան. Խնդրում եմ . . . այդ մասին չխօ-
սենք այլ եւս: Դուք արդէն ասացիք, որ պէտք է
ընդունեմ ինձ առաջարկած ամուսին . . . եւ ես
այդպէս կվարսիմ, ձեր տուած խորդով:

Վաշեր. Մի՛ արդարացնէք ձեզ իմ տուած
խորհրդով, գուք արդէն որոշած էիք: Սնհիմն պատ-
ճառաբանութիւն էք բերում ձեր խօսքին անհաւա-
տարիմ լինելով արդարացնելու:

Մարիան. Սասց է, այդպէս է:

Վաշեր. Իհարկէ, եւ ձեր սիրալ երբէք ինձ
համար վառ եւ բորբոք չէ եղել:

Մարիան. Ազատ էք այդպէս մտածելու:

Վաշեր. Այս, ազատ եմ: Բայց ես վիրաւոր-
ված եմ . . . սակայն զիտեմ թէ որտեղ կդժնեմ
ցանկալի ընդունելութիւն:

Մարիան. Ի նկատի ունենալով ձեր արժանաւորութիւնը, բոլորպին հաւատում եմ... .

Վաղեր. Թողնենք իմ բարեմանութիւններս, դուք չփնահատեցիք նոցաւ Սակայն կայ մի ուրիշ—նորան ևս հաւատում եմ—նա կարող է իմ կորուսս փոխարինել:

Մարիան. Կորուսսն այնքան չնշին է, որ միխթարութիւն դժուար չէ գտնել...

Վաղեր. Այս, կաշխատեմ... . ամեն միջոց դործ կդնեմ, որ մոռանամ այդ սէրը, հակառակ դէպքում դռնէ կկեղծեմ: Աններեւի ստորութիւնն է սիրել նորան, ով դաւաճանում է:

Մարիան. Վսեմ եւ ազնիւ զգացում է:

Վաղեր. Հապա, դուք կամենում էիք, որ այդ սէրի բոցը ձեզ համար պահէի յաւիտեան եւ ձեղանից մերժված սիրաս մի ուրիշն չնուիրէի:

Մարիան. Ոչ, ընդհակառակն, ես կցանկայի, որ սյու բանը շուտով կատարվէր:

Վաղեր. Այդ կցանկայի՞ք:

Մարիան. Այս...

Վաղեր. Բաւական է ինձ վիրաւորել. իսկոյն ձեր ցանկութիւնը կկատարվի (կամենում է զնալ):

Մարիան. Շատ լաւ:

Վաղեր. (Վերադառնալով) Սակայն մի՛ մոռանաք, որ դուք էք ստիպում ինձ այսպէս վարվել. (զնում է):

Մարիան. Չեմ մոռանայ:

Վաղեր. (Վերադառնալով) Եւ իմացէք, որ օրինակը ձեղանից եմ վերցնում:

Մարիան. Այս, ինձանից:

Վաղեր. (Հեռանալով) Դուք շուտ կլոէք, որ ես պակվում եմ:

Մարիան. Աւելի լաւ:

Վաղեր. (Վերադառնալով) Ես այս վերջին անգամ եմ ձեր մօտ:

Մարիան. Բարի մանապարն...

Վաղեր. (Հասնելով միհյեւ դուռը եւ վերադառնարով) Ուրեմն:

Մարիան. Ի՞նչ կայ:

Վաղեր. Կարծես կամչեցիք:

Մարիան. Ե՞ս երազ էք տեսնում:

Վաղեր. Ուրեմն մաղթում եմ ձեզ ամենայն յաջողութիւն (յամրախայլ հեռանում է):

Մարիան. Գնացէք բարով:

Դօրին. (Մարիանին) Կարծես թէ միտքդ մոլորվել է. թոյլ տուի ձեզ, որ վիճէք տեսնելու թէ ի՞նչով կվերջանայ այս ամենը: Սպասեցէք, պ. Վաղէր: (Վաղէրի ձեռից բռնած կանգնում է):

Վաղեր. (Իր ականայ) Ի՞նչ ես կամենում, Դօրին:

Դօրին. Այսուեղ եկէք:

Վաղեր. Ոչ, վիշտն ինձ խեղզում է: Պիտի կատարեմ օրիորդի կամքը:

Դօրին. Սպասեցէք:

Վաղեր. Ոչ երբէք: Վերջացած բան է:

Դօրին. Բայց դուք...

Մարիան. (Մի կողմ) Նա ինձանից վախչում է, ձեղանում է, աւելի լաւ է ես ինքս կզնամ:

Դօրին. (Բաց բողելով Վաղէրին եւ շապելով Մարիանի ետերից) Իսկ դուք ո՞ւր էք գնում:

Մարիան. Գնում եմ, թող;
Դօրին. Սպասեցէք:

Մարիան. Ոչ, ոչ, զուր ես կամենում ինձ
բռնել:

Վաղեր. (Մի կողմ) Տեմում եմ, որ ինձ
նայելը պատիժ է նորա համար. ուստի ազատելու
է նորան:

Դօրին. (Թողմելով Մարիանին եւ Վաղերի
ետելից շտապելով) Դարձեալ, ես կտոր կտոր չեմ
կարող լինել: Դադարեցրէք այդ կասակը եւ եկէք
երկուսդ եւս. (Մարիանի եւ Վաղերի ձեռներ բըռ-
նած, առաջ է բերում) . . .

Վաղեր. (Դօրինին) Ի՞նչ է միտքդ:

Մարիան. (Դօրինին) Ի՞նչ ես կամենում
անել:

Դօրին. Կամենում եմ ձեզ հաշտեցնել եւ
վերջացնել: (Վաղերին) Միթէ խելքդ կորցրել էք,
որ այսպէս կուռում էք:

Վաղեր. Զւեցիր թէ ի՞նչ ասափճանին վի-
րաւորեց ինձ:

Դօրին. (Մարիանին) Խենթութիւն է այդ-
պէս զայրանալ:

Մարիան. Դու տեսար թէ նա ի՞նչպէս հա-
մարձակեց ինձ հետ վարվել:

Դօրին. (Վաղերին) Երկու կողմից եւս ան-
մտութիւն է: Երաշխաւոր եմ, որ նա ուրիշ ոչ մի
փափագ չունի, բայց եթէ ձեր կինը լինելու: (Մա-
րիանին) Նա միմիան ձեզ է սիրում, ուրիշ փափագ
չունի բայց ձեր ամուսին լինելուց. պատրաստ եմ
դորս համար զլուխս տալու:

Մարիան. (Վաղերին) Ի՞նչի ինձ այդպիսի
իւրիսուրդ տուիք:

Վաղեր. Ի՞նչի այդ մասին խնդրեցիք ին-
ձանից . . .

Դօրին. Երկուսդ եւս խելքներդ կորցրած
էք: Տուէք ձեր ձեռքերը մին եւ միւսը: (Վաղերին)
Դէհ, ձեռք տուէք:

Վաղեր. (Չենք տաղով) Ի՞նչ պէտք է ձեզ
ձեռքս:

Դօրին. (Մարիանին) Դէհ, զուք եւս:

Մարիան. (Չենք երկարելով) Ի՞նչ է այս
բոլորը:

Դօրին. Դէհ, տուէք, ահա այդպէս . . . Մի-
մեանց վրա սիրահարված էք, աւելի քան թէ կար-
ծում էք: (Մարիան եւ Վաղեր կանգնում են ձեռք
ձեռքի տուած, առանց միմեանց վրա նայելու):

Վաղեր. (Դառնաղով Մարիանին) Մի՛ յա-
մառէք, եւ նայեցէք առանց ատելութեան. (Մա-
րիանը մատելով դառնում է դեպի Վաղերը):

Դօրին. Ճշմարիտ որ սիրահարութենից մար-
դիկ երբեմն խենթանում են:

Վաղեր. (Մարիանին) Միթէ իրաւոնք չու-
նիմ ձեր դէմ տրանցելու: Եւ ճշմարիտն ասելով,
զուք այնքան չարասիրա էք, որ վայելչութիւն է
ձեզ համար վշտացուցիչ բան ասել:

Մարիան. Խոկ զուք միթէ ամենաերախ-
տամու մարդ չէք:

Դօրին. Այս վէճը թողնենք ասպագային եւ
մտածենք այս խայտառակ պսակը քանդելու:

Մարիան. Ի՞նչ անելու է սորա հետ:

Դօրին. Ամեն միջոցներ գործ կղնենք: (Մարիանին) Զեր հայրը կատակ է անում: (Վաղերին) Տեսնենք ինչ դուրս կպայ: (Մարիանին) Իսկ դըլիսաւորը ձեր կողմից սակաւ ինչ յոյս տան է, որպէսզի նեղ ընկած տեղը յետաձգէք: Երբեմն թաղման համդէսին պատահած լինելը պատճառ բերել, երբեմն հայելին կոտրել, մի ուրիշ անգամ հիւանդանալ, երբեմն անրարեգուշակ մի բան նկատել, վերջապէս պատրակը պակաս չէ... Զեղ բռնի չեն կարող պսակել: Իսկ առաւել յաջողութեան համար, իմ կարծիքով, լաւ է, որ ձեղ միասին չտեսնեն խօսելիս: (Վաղերին) Գնացէք եւ անյապաղ ձեր բարեկամների միջոցով աշխատեցէք, որ ձեղ առած խօսքը կատարեն: (Մարիանին) Իսկ մեղ գուցէ ձեր եղայրը կօգնէ, նոյնպէս եւ մայրը: Դէհ գնացէք:

Վաղեր. (Մարիանին) Որքան որ ջանքեր գործ գնվին, բայց գլխաւոր յոյս գուշ էք:

Մարիան. (Վաղերին) Հօրս կամքի մասին ոչնչ չեմ կարող առել, բայց ես կամ ձերը կլինիմ, կամ ոչ ոքին:

Վաղեր. Դուք ինձ կենդանութիւն էք տալիս: Եւ ինչ որ չլինի...

Դօրին. Ախ, սիրահարվածների լեզուները երբէք չեն յոգնում... Գնացէք ասում եմ:

Վաղեր. (Վերադառնարով) Վերջապէս...

Դօրին. (Հրեղով երկուսին եւս դեպի հակառակ կողմեր) Հրամեցէք այս կողմ. Իսկ դուք գնացէք այն կողմը:

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա.. ԵՐԵՒԱՑՅՈՒ

ԴԱՄԻՍ ԵՎ ԴՕՐԻՆ

Դամիս. Երկնքի որոտումը թող ջախջախէ ինձ, կամ ամենայիւտին սրիկայ վերջապէս լինիմ, եթէ մի աղմուկ չհանեմ. ոչ մի աստիճանաւոր, ոչ մի իշխանութիւն ինձ չեն կարող արգելել...

Դօրին. Իսէր Աստուծու, այդքան մի զայրանաք: Զեր հայրը պարզապէս միայն խօսեց, բայց ամեն ասածը չէ կատարվում: Նախազծելն ու կատարելը չափ հեռաւոր են միմեանցից:

Դամիս. Այդ ապաշնորհ Տարտիւֆի դաւը պէտք է ոչնչացնել. կկամենայի նորան մի երկու խօսք ասել...

Դօրին. Ահ, թէ նորա եւ թէ հօրդ վերաբերմամբ պէտք է ներգործել հանգարտ խորհելով... Զեր մայրը Տարտիւֆի հետ այժմ եւեթ պիտի խօսակցէ: Առաջին անգամ չէ մօրդ առաջ նորա խոսնարհելը. կարծես թշուառականը սիրահարված լինի մօրդ վրա. երանի թէ... նախ պիտի խօսէ այս պսակի մասին եւ յետոյ թէ ինչ անախորժ հետեւանքներ կարող է ունենալ նորա այս նապատակը: Նորա սպասաւորն ասաց, որ նա աղօթում է, եւ ես չկարողացայ նորան կանչել: Բայց շուտ վերջացնելու է, ուստի դուք գնացէք խնդրեմ, իսկ ես կսպասեմ:

Դամիս. Ես եւս կարող եմ ներկայ լինել
այդ խօսակցութեանը:

Դօրին. Ոչ, ոչ, թող նոքա առանձին խօ-
սակցեն...

Դամիս. Ես նորան ոչինչ չեմ ասի:

Դօրին. Անկարելի է հաւասար, որ գուք
չպրզովիք, որով բոլոր գործը կիսանգարէք, գնացէք:

Դամիս. Ոչ, ես ամենեւին չեմ զայրանայ:

Դօրին. Անտանելի մարդ էք: Ահա զալիս
է: Գնացէք ուրեմն: (Դամիսը պահպում է դրան
ետեւը):

Բ. ԵՐԵՒՈՅԹ

ԴՕՐԻՆ ԵՒ ՏՍ.ՐՏԻՒԹ

Տարսիւֆ. (Նկատելով Դօրինին, երեսը
դարձնում է եւ դրան մէջ կանգնած ասում է իր
ծառայշին). Պահիր, Լօրան, խարազանս ու քուրճա,
եւ ազօթիր, որ Աստուծու օրհնութիւնը միշտ վրադ
լինի: Եթէ ինձ հարցնող լինի, ասա թէ բանտ եմ
գնացել, թշուառներին մի բան տալու:

Դօրին. (Ինչն իրան) Մնապարծ կեղծաւոր
Տարսիւֆ. Դուք ի՞նչ էք կամենում:

Դօրին. Զեղ ասել, որ...

Տարսիւֆ. Ոչ, Աստուած... (զրպանից հա-
նում է բաշկինակը) Խօսելուց առաջ ինդրում եմ
առէք այս թաշկինակը:

Դօրին. Ի՞նչի:

Տարսիւֆ. Ծածկեցէք ձեր կուրծքը, որ
չտեսնեմ: Այդ ձեր պհնասիրութենից մարդու հոգին
վրդովվում է եւ յանցաւոր մտքեր են ծնվում...

Դօրին. Ուրեմն փորձութեան առաջ դուք
բառական թողլ էք, եւ մարմինը ձեղ գայթակղեց-
նում է: Զգիտեմ, դուք ի՞նչի էք զրդովում, իսկ
ես շատ հանդիսատ եմ: Ես կարող եմ ձեզ դիմից
մինչեւ ոտք մերկ տեսնել:

Տարսիւֆ. Մի փոքր համեստութեամբ խօ-
սեցէք, ապա թէ ոչ իսկոյն կդնամ:

Դօրին. Ոչ, ոչ, խնդրում եմ մնացէք, ես
կլում... Ես միայն մի խօսք ունիմ ձեզ ասելու: Թի-
կինը կամենում է զալ այս սենեակը, փոքր ինչ ձեղ
հետ խօսելու բան տնիր:

Տարսիւֆ. Ոչ, ամենայն ուրախութեամբ...

Դօրին. (առանձին) Բոլորովին հալվեցաւ:
Ճիշդ այն է, ինչ որ ասացի:

Տարսիւֆ. Շուտ պիտի զայ արդեօք տի-
կինը:

Դօրին. Կարծեմ այս բոսկէիս... ահա գա-
լիս է: Ես թողնում եմ ձեզ երկուսիդ միասին:

Գ. ԵՐԵՒՈՅԹ

ՏՍ.ՐՏԻՒԹ ԵՒ ԷԼ.ՄԻՐ

Տարսիւֆ. Ամենարարի Նախախնամօղը թող
պարզեւէ ձեղ հոգեկան եւ մարմնական առողջու-
թիւն եւ օրհնէ ձեր կեանքի օրերը, որքան որ մաղ-
թում է անդադար աստուածապաշտներից ամենա-
խոնարհն:

Էշմիր. Շնորհակալութիւն ձեր բարեմաղ-
թութիւնների համար: Բայց նստենք աւելի յարմար
կլինի...

Տարսիւֆ. (Եսեղով) Այժմ առողջացած էք
արդեօք բոլորովին:

Էշմիր. Այս, բոլորովին:

Տարսիւֆ. Համում են արդեօք երկնքին
իմ պարագասնքները, չզիտեմ, սակայն իմ մշտական
աղօթքներիս մէջ չեմ դադարել ձեր առողջանալու
համար աղաչելուց:

Էշմիր. Ձեր այդ ջերմենումդութիւնը իմ
վերաբերմամբ բաւական նեղութիւն էր ձեզ:

Տարսիւֆ. Ձեր առողջութիւնը շատ թան-
կապին է: Ձեր առողջութիւնը վերականգնելու հա-
մար պատրաստ եմ ես իմ տալու:

Էշմիր. Չափազանց մեծ է ձեր քրիստոնէ-
ական մարդասիրութիւնը եւ ինձ շատ էք պարտա-
ւորեցնում ձեր բարեացականութեամբ:

Տարսիւֆ. Ես չեմ կարողանում ձեզ գնա-
հատել, որքան որ արժանի էք զուք:

Էշմիր. Ես կամենում եմ ձեզ հետ խօսել մի-
գործի մասին, եւ ուրախ եմ, որ առանձին ենք
այստեղ:

Տարսիւֆ. Ես նոյնպէս հիացած եմ, եւ
իհարկէ ինձ համար քաղցր է, տիկին, որ ես միայ-
նակ եմ գանվում ձեզ հետ: Այս մասին մատուցած
եմ Աստուծուն աղաչանքներս, որ ահա այժմ են
կատարվում:

Էշմիր. Ես կամենում եմ, որ մեր խօսակ-
ցութիւնն անկեղծ լինի եւ զուք ամենայն պար-
զութեամբ բանաք ձեր սիրաք, առանց մի բան
ծածկելու: (Դամիսն—առանց երեւելու, փոքր ինչ

բանում է դուռը, որի ետևում պահիած էր եւ
ականց է դնում խօսակցութեամբ):

Տարսիւֆ. Ես եւս իբրեւ առանձին շնորհ
ինդիրում եմ թոյլ տալ ինձ բանալ ձեր առաջ ամ-
բողջ իմ հոգիս: Հաւատացէք, որ իմ այստեղ սսած
բոլոր խօսքերն ու վէճերը ձեզ այցելող երկրպա-
գուների մասին, ոչ թէ ձեր գէմ ատելութեան հե-
տեւանքն են, այլ իմ ջերմենումդութեան եւ հիաց-
ման զգացմոնքից են առ ձեզ, որոնք յափշտակում
են ինձ եւ նախանձ շարժում:

Էշմիր. Հաւատում եմ ձեզ, եւ զիտեմ, որ
դուք ցանկանում էք միայն իմ հոգու փրկութիւնը:

Տարսիւֆ. (Բոնելով եւ սեղմելով էղմիրի
ձեռիք): Այս, իհարկէ այդպէս է, տիկին: Եւ իմ վա-
համակրութիւնս . . .

Էշմիր. Ուգ, ինչ պինդ էք սեղմում:

Տարսիւֆ. Սա իմ ջերմ եռանդսէ առ ձեզ
—Միթէ երբէք կցանկանամ ձեզ ցաւ պատճառել:
Եւ նախ պատրաստ եմ . . . (ձեռիք էղմիրի ծնկի
վրա է դնում):

Էշմիր. Վերցրէք ձեր ձեռքը այդ տեղից . . .

Տարսիւֆ. Շօշափում եմ ձեր հագուստը,
շատ նուրբ հիսուածք է:

Էշմիր. Մի անէք, ինդիրում թողէք, խլոր-
ամնքից վախենում եմ: (Էղմիրը հեռացնում է իր
թիկնարուը, Տարսիւֆը նորից մօտենում է):

Տարսիւֆ. (Էղմիրի օձիքը շօշափելով).
Իսկ այս հւասուածքը հիմնալի է: Այժմ հրաշալի
կերպով են գործում: Երբէք ոչ մի գործի մէջ այս-
չափ առաջ չեն գնացել . . .

Է շմիր. Ճշմարիտ է. Բայց խօսենք գործի մասին: Լսում եմ, թէ ամուսինու կամենում է իր խօսքը յետ առնել եւ իր աղջկան իր ձեզ տալ: Ասացէք, սայդ է արդեօք:

Տարսիւ գ. Նա ակնարկեց ինձ, բայց, տիկին, ստոյպն ասեմ, այդ չէ ամենեւին իմ վախաղածու: Ինձ բաղլաւորութիւն աբրգեւողը մի ուրիշ գեղեցկութեան հրաշալիքներն են:

Է շմիր. Այս, զուք երկրային բարիքները սիրու չէք:

Տարսիւ գ. Կրծքիս մէջ քարէ սիրս չէ դրված:

Է շմիր. Ես կարծում եմ, որ բոլոր ձեր վախագները գէպի երկինք են ձգտում, եւ երկրի վրա ոչինչ ցանկալի բան չկայ ձեզ համար:

Տարսիւ գ. Երկնային յաւիտենական բարիքների սիրը չէ ոչնչացնում մեր մէջ երկրաւոր բարիքներ սիրելու ցանկութիւնը: Մեր սրաերը գիւղութեամբ կարող են յափշտակվել երկնքի կատարեալ գեղեցկութեամբ: Եւ այս գեղեցկութիւնը, որ հիացնում է մարդուս աչքերը և յափշտակում է սրաերը, մարմնացած է ձեր մէջ: Անկարելի է նայել ձեզ եւ չգոհանալ ընութեան արարից եւ չզգալ սրտի մէջ ջերմ եւ բորբոք սեր առ ձեզ: Սկզբում մտածում էի թէ վորձութիւն է իմ այդ ծածուկ եռանդը եւ թէ չար սպին կամենում է արգելք լինել փրկութեանու Բայց շուր հասկացայ, թէ ոչինչ գայթակղութիւն չէ սպասում հոգուս եւ թէ կիրքս ոչ մեղանչական է եւ ոչ հակառակ է բարեպաշտութեան: ուստի սիրսու նուի-

րեցի նոյն կրքին: Խոստովանութիւնս իհարկէ յանդուգն է, բայց ձեր աստուածային բարութեամբ եւ կարեկցութեան զգացմամբ ներեցէք իմ համարձակութեանս: Ձեր մէջ է իմ յոյսս, իմ բարիք, իմ անդորրութիւնս: Ձեզանից է կախված իմ թշուառութիւնս կամ երջանկութիւնս: Վերջապէս գուք պիտի վճռէք ինձ բաղզաւորացնել կամ անբաղզացնել:

Է շմիր. Շատ սիրուն են ձեր արտայատութիւնները, սակայն խոստովանում եմ, որ փոքր ինչ ապշեցնում են ինձ: Ձեզ պէտք էր զսպել, կարծեմ, ձեր զգացմանքը եւ այդքան ազատորէն չխօսել ձեր խորհրդի մասին: Ձեզ պէս մի աստուածապաշտ, որին ամենքն ասում են . . .

Տարսիւ գ. Ի՞նչ ասել է: Իհարկէ ես աստուածապաշտ եմ, բայց չէ որ, ես եւս մարդ եմ: Եւ երբ մարդը մեսնում է ձեր երկնային գեղեցկութիւնը, սիրար գրաւվում է եւ չէ գատում: Այս խօսքերն իմ բերանումս ձեզ շատ օտարուի են Երեւում: Բայց, ափկին, չէ որ ես հրեշտակ չեմ, եւ եթէ իմ խոստովանութիւնս զուք կղատապարտէք, ուրեմն զատապարտացէք ձեր հիառքանչ կախարդանքները: ուրեմն զերմարգկային գեղեցկութիւնը տեսայ թէ չէ, զուք իմ հոգու ափրուհի զարձաք: Ձեր աստուածային աչքերի անջնջելի քաղցրութիւնը ստիպեցի ինձ ամեն բան մոռանալ. պասս, ազօթքը, արտասուքս, բոլոր իմ վախագներս ձեր հրապոյրների կողմը գարձեց: Եւ ինչ որ առաջ աչքերով եւ հասաշանքներով էի միայն լուռ ու մոռջ յայնում, վճռեցի վերջապէս խօսքերով արտայապել . . . Ոչ, եթէ բարեհաճէիք տեսնել ձեր խոնարհ

ծառայի տանջանքը, եթէ ինձ պէս չնչն մարդու վիճակին զիթալ հաճէիք, ես միայն ձեղ կպաշտէի փառաբանորէն յաւիտեան... ինձ հետ ձեր պատիւը ապահոված է ամենայն բամբասանքի դէմ և երբէք երկիւղ պիտի չունենայ իմ կողմից: Մինչդեռ աշխարհի բոլոր պահապէջները, որոնց համար կանայք խելք են կորցնում, միշտ աղբուկ են հանում և խօսում են վայրարար, պարծենում են իրանց յաղթանակով և անուանարկում են այն կանանց, որոնց մօտ չնորհ են գտնում: Եւ նոցա անհամեստ և անփոհեմ լեզուն խայտառակում է այն սուրբ սեղանը, որտեղ իրանց սիրաը զո՞ն է մատուցանում: Իսկ ինձ պէս մարդիկ վասված են համեստութեան կրակով, ինձ հետ վսահ պիտի լինիք յաւիտեան, որ գաղտնիքը չի յայտնվի: Ի՞մ համարման մասին ունեցած իմ հոգացողութիւնը բոլորովին ապահովացնում է իմ սիրած անձի պատիւք: Եւ անա ես միայն կարող եմ սիրել առանց հասարակական գայթակութեան և վայելչութիւն տալ առանց որեւէցէ երկիւղի:

Է լ մ ի ր. Լսեցի ձեր բոլոր ասածը: Եւ ձեր բարձր ձարտարախօսութիւնը հասկացայ: Սակայն մի՞թէ դուք չէք կարծում, թէ ես սլարտական և ձեր այս չերմ եռամսղը ամուսնիս յայտնել եւ թէ ձեր այս սէրի արտայայտութիւնը կարող է փոխել տալ նորան իր առ ձեզ ունեցած բարեկամութիւնը:

Տ ա ր ս ի ւ գ. Ես զիտեմ, որ դուք շատ բարի էք եւ կներէք իմ յանդգնութեանս և մարդկային թուլութեանս, եւ բուռն կրքերս թողութիւն կը տաք: Մասածեցէք ինողում եմ, որ ձեզ նայել եւ

սառնարիւն մնալ, մարմին ունեցօղ մարդու կարուղութենից վեր է ...

Է լ մ ի ր. Այս ամենին ուրիշներն ուրիշ կերպով կնայէլին, իսկ ես համեստութեամբ կվարվիմ: Ես իմ ամուսնին ոչինչ չեմ ասի, բայց դուք եւս սորա փոխարէն պիտի խոստանաք անկեղծօրէն եւ աներկղիմաբար նպաստել Վալէրի և Մարիանի ամուսնութեան, եւ գուք ձեռք քաշէք, եւ այս գործի մասին այլ եւս չմտածէք: Ապա թէ ոչ ...

Դ. ԵՐԵՒԱՅԹ

ՏՈՐՏԻՒԹ, ԷԼՄԻՐ ԵՎ ԳԱՄԻԿ

Դ ա մ ի ս. (Դուրս գալով դրան եւելից) Ոչ, աի-կին, ոչ, ես պիտի հրատարակեմ... ես ամեն բան լսեցի: Աստուծ օգնում է ինձ վնասակար դաւաճանի գոռապութիւնը խայտառակելու, նորա կեղծաւորութեան եւ յանդգնութեան վրէմը առնելու: Պէտք է հասկացնել հօրս եւ յայտնել նորան, թէ ինչ օձին էր հովանաւորում նա:

Է լ մ ի ր. Ոչ, Դամիս, բաւական է, որ նա աւելի խոնեմ դառնայ եւ գնահատէ իմ իրան արած չնորհը, որովհետեւ ես խօսք տուի նորան: Ես սովորութիւն չունիմ աղմուկ հանելու: սիրօղ մի կնոջ համար այս յիմարութիւնները ծիծաղելի են եւ սոցա պատճառով երբէք ամուսնին նեղութիւն տալ չարժէ ...

Դ ա մ ի ս. Դուք իրաւոնք ունիք այդպէս վարվելու, ես եւս իմ իրաւոնք ունիմ այլապէս վարվելու: Նորան իննայել կնշանակէր ծաղրելի զառ-

նալ. Հապա քանիցս զայրացրած է սա մեղ իր յանա-
դուզն ամբարտաւանութեամբ եւ խոռվութիւններ
ձգելով; Նենդամիտ ազգեցութիւն ունենալով հօրս
վրա, նա վեստ էր հասցնում թէ ինձ եւ թէ Վալե-
րին. Պէտք է որ այս նենդասորին նա ճանաչէ; Եւ
ահաւասիկ յաջող գէպք. Ի՞նչպէս կարելի է այս-
պիսի մի յաջող առիթ ձեռքից բաց թողնել եւ ո-
գուս չքաղել . . .

Էշմիր. Դամի՛ս:

Դամիս. Ոչ, խնդրում եմ. ես այսպէս եմ
որոշած: Հոգով չափ ուրախ եմ: Դուք իզուր մի՛
աշխատիք ինձ համոզելու. ես պիտի վրէժս առնեմ:
Ես անհամբեր սպասում էի այս օրին, որ ահա վեր-
ջապէս հասաւ.

Ե. ԵՐԵՒԱՅԹ

ՏԱՐԺԻՒԹ, ԳԱՄՄԻՍ, ԷԼՄԻՐ ԵՒ ՕՐԳՈՆ

Դամիս. Համեցէք, հայրիկ, թալմ նորու-
թիւն կհաղորդեմ, որ ձեղ շատ կզարմացնէ: Ահա
ձեր փայփայանքների եւ գորովի փոխարէն ձեզ լա-
հասաւցանող մարզը Նորա մեծ ջերմնուանդութիւնն
առ ձեզ նոր ահա յայսնմիցաւ: Նա ցանկանում է ձեր
պատիւը անուանարկել: Այս վայրկեանիս նորան
ձեր տիկնոջ առաջ տեսայ բորբոք սէրը խոստովա-
նելիս . . . Տիկինը իր բարեսրտութեամբ կամնում
էր այս բոլորը ձեզանից ծածկել: Իսկ ես համար-
ձակ առակում եմ նորան: Եւ կարծում եմ, որ ձե-
զանից այս ծածկելը ձեղ մեծ վիրաւորանք հասցնել
կնշանակէր:

Էշմիր. Ես նոյն կարծիքի վրա եմ, որ այս-
պիսի դաստիարկ բաներով պէտք չէ ամուսնին վրզո-
վել: Այսպիսի բանից կախում չունի մեր պատիւը,
եւ պէտք է մենք ինքներս իմանանք մեղ պաշտ-
պանել: Այս է իմ զգացածը: Եթէ գու փոքր ինչ
յարգանք ունենայիր դէսի ինձ, ոչինչ չէիր ասի:

Զ. ԵՐԵՒԱՅԹ

ՏԱՐԺԻՒԹ, ԳԱՄՄԻՍ ԵՒ ՕՐԳՈՆ

Օրգօն. Անհաւասալի եւ սարսափելի բան
եմ լսում:

Տարժիւթ. Այս, եղբայր իմ, ես չարամիտ
եմ, ես յանցաւոր եմ, ես անբաղդ մեղաւոր եմ: Այս,
ես մարմնացած անառակութիւն եմ: Ամբողջ կեանքս
լի է արատներով, յանցանքներով եւ մեղքերով: Ես
տեսնում եմ, որ Աստուած ինձ պատժելու համար
կամնում է ինձ ոչնչացնել: ինչ սարսափելի յան-
ցանք որ վերագրեն ինձ, ես չեմ կամնում ինձ ար-
դարացնել: Հաւասացէք բոլորին, ինչ որ ձեղ ասում
են, բորբոքնեցէք ձեր գայրովթը եւ իբրեւ մի յան-
ցաւորին արտաքսեցէք ինձ ձեր տանից: Այդքան
խայտառակութիւն գեռ եւս քիչ է ինձ համար:

Օրգօն. (Իր որդի Դամիսին) Ահ ապահովին,
այդ զրագրաւութեամբ գու համարձակում էիր սե-
ւացնել սորա առաքինութեան մաքրութիւնը:

Դամիս. Այս ի՞նչ բան է: Սա պիտի շարու-
նակէ՞ կեղծաւորել, եւ դուք պիտի հաւատա՞ք:

Օրգօն. Լոիր, անիծված ժանտավաստ:

Տարսիւթ. Ոհ, ոչ թողէք խօսէ: Դուք գուր էք մեղադրում դրան: Աւելի լաւ կլինի, որ հաւատաք դրա ասածներին: Ի՞նչի այդքան ներողամիտ էք գէպի ինձ: Դուք ի՞նչ գիտէք, թէ ինչ բանի ընդունակ եմ ես: Չեզ շացրած է, եղայր, անկասկած իմ արտաքին համեստութիւնը: Դուք ինձ աւելի լաւ էք համարում քան թէ ինչպէս որ ինձ տեսնում են: Ոչ, ոչ, գուք արտաքին ձեւից շատ էք խալվում: Աւաղ, ես այն եմ, ինչ որ կարծում են ինձ մարդիկ: Ամենքն ինձ առաքինի մարդ են կարծում, բայց ճշմարիսն ասելով, ես ոչինչ արժանիք չունիմ: (Դամիսին) Այո, որդեակա, շարունակեցէք, կոչեցէք ինձ ստախօս, անպատիւ, անսասակ, մարդասպան, վերջապէս աւելի անարդ անուններ տուէք ինձ, ես չեմ կարող հակառակել, ես արժանի եմ: Չեր առաջ ճնկաչոք պիտի տանեմ ամենայն խայտառակութիւն իրեւ կեանքիս մէջ գործած անհամար յանցանքներիս փոխարինութիւն:

Օրգօն. (Տարտիւթին). Եղայր իմ, այս շափազանց է: (Դամիսին) Խիզդդ չէ տանջո՞ւմ քեզ, մասնիչ:

Դամիսի. Ոհ, սորա խօսքերը գեռ եւս պիտի խաբեն ձեզ այն աստիճանին . . .

Օրգօն. Լոփր: (Տարտիւթին) Վերկացէք, եղայր իմ: Խնդրում եմ... (Դամիսին) Ապաշնորհ... .

Դամիսի. Այդպիսի մարդ կարող է . . .

Օրգօն. Լոփր:

Դամիսի. Կատաղում եմ: Կարելի բան է: Օրգօն. Եթէ գու մի բառ անդամ կարտասանիս, գլուխդ կպատճեն:

Տարսիւթ. Սիրելի եղայր իմ, իսէր Աստուծում մի՛ զայրանաք: Ես պատրաստ եմ ամենածանր տանջանքներ կրելու, միայն թէ ուրիշի մի փոքրիկ վէրք չաեւնեմ:

Օրգօն. (Դամիսին) Ապե՞րախտ:

Տարսիւթ. Թողէք խնդրում եմ: Ծնկաչոք ձեր առաջ ինդրում եմ ներեցէք դորան . . .

Օրգօն. (Խնձն եւս չոփելով եւ գրկելով) Տարտիւթին) Ոչ Աստուծած, գուք կատակ էք անում: (Դամիսին) Անպիտան, նայիր ո՛քան բարի է:

Դամիսի. Ուրեմն . . .

Օրգօն. Լոփր:

Դամիսի. Բայց ես . . .

Օրգօն. Լոփր ասում եմ: Ես լաւ գիտեմ թէ ինչն է ստիպում ձեզ նորա վրա յարձակվելու: Եւ ահա տեսնում եմ, որ սորան գուք ամենքդ ասում էք. կինս, զաւակները, սպասաւորները, ամննքդ զայրացած էք սորա դէմ: Դուք անամօթաբար ամեն միջոց գործ էք գնում այս աստուծապաշտ մարդուն ինձանից հեռացնելու: Բայց որքան աւելի կաշխատէք նորան վատարանելու, այնքան աւելի պիտի մուերմանամ նորա հետ: Ուստի կշտապել աղջիկս նորան տալու եւ նա ամբողջ գերդաստանիս պարծանք կդառնայ:

Դամիսի. Մի՛թէ կարելի է քրոջս ստիպել պսակվելու:

Օրգօն. Այո, այս երեկոյեան եւեթ, ձեզ ամենքիդ զայրացնելու համար: Այո, ես ձեզ ամենքիդ խելքներդ ցլուխներդ ժողովել կտամ: Չեզ ցոյց կտամ, որ պարտական էք ինձ հնազանդել, որ ես

եմ տանտէրը: Դեհ, անպիտան, չոքիր այս բողէիս,
ընկիր սորա ոտներն եւ աղաչիր, որ ներէ:

Դա միս. Ե՞ս, ես չոքեմ այս ստախօսի ա-
ռաջ, որը իր խաբեայութեամբ . . .

Օրգօն. Այսպէ՞ս է, գեռ զու յամառում ես
եւ սննդասուում ես: Մի այդ փայտը տուէք ինձ:
(Տարտիւթին) Անդրում եմ թողէք ինձ, արգելք մի՛
լինիք: (Դամիսին) Դուքս, այս բողէիս գուշա կո-
րիր իմ տանից: Եւ այսուհետեւ չամարձակես ոստ
այստեղ դնել:

Դա միս. Ես կգնամ . . . բայց . . .

Օրգօն. Շուտ գուշա գնա: Ես քեզ զրկում
եմ ժառանգութենից, այլեւ նզովում եմ քեզ . . .

Է. ԵՐԵՒԱՅՑԹ

ՏԱՐՏԻՒԹ ԵՒ ՕՐԳՈՆ

Օրգօն. Այսպէս վիրաւորել մի սուրբ անձն:
Տարտիւթ. Ով Աստուած, ներիր նորան,
ինչպէս ես եմ ներում: Եթէ խմանայիք, թէ որքան
տառապանք է ինձ համար, որ եղբօրդ առաջ այս-
քան աշխատում են ինձ արատաւորել:

Օրգօն. Ափսոս:

Տարտիւթ. Այս ապերախտութեամ միայն
զաղափարը տառապեցնում է հոգիս: Ո՞րքան վիշտ
եմ զգում . . . իմ բարիքի փոխարէն չարիք ինձ
հասցնել . . . Գուցէ անընչամէր ու աղքատ լինելուս
համար է: Սլրոս նեղանում է, չեմ կարողանում
խօսել, կարծեմ թէ պիտի մեռնեմ:

Օրգօն. (Արտասուլը աչերին վազում է
դեպի այն դուռը, որով դուրս գնաց Դամիսը). Ան-
պիտան արարած, շատ ցաւում եմ, որ աեղնուան
չմեռցրի քեզ իսկոյն . . . (Տարտիւթին) Հանգստա-
ցէք, սիրելի եղբայր իմ. մի՛ զայրանաք:

Տարտիւթ. Վերջացնենք, վերջացնենք այս
վշտալի վէճները: Տեսնում եմ, որ խոռվութիւնների
պատճան ես եմ, ուստի պէտք է որ ես հեռանամ
այստեղից:

Օրգօն. Ի՞նչ կատա՞կ էք անում:

Տարտիւթ. Ինձ այստեղ ամենքն ասում
են, եւ տեսնում եմ, որ ամեն կերպով աշխատում
են իմ հաւատարմութիւնը ձեր աչքին կասկածելի
զարձնելու, եւ գեռ ինչեր պիտի անեն:

Օրգօն. Ինչ կամենում են թող անեն: Մի՞-
թէ ես նոցա որեւիցէ հաւատ եմ ընծայում:

Տարտիւթ. Նոքա չեն գաղարի զրպարտե-
լուց իհարկէ: Եւ ինչ որ գուք այսօր չէք կամենում
լսել, մի ուրիշ անգամ կարող են հաւատացնել ձեզ:

Օրգօն. Ոչ, եղբայր իմ, երբէք:

Տարտիւթ. Այս սիրելի եղբայրս, կինը ըն-
դունակ է միշտ ամուսնի հոգին զիւրութեամբ
գրաւելու:

Օրգօն. Ոչ, ոչ:

Տարտիւթ. Թողը տուէք ինձ շուտ այստե-
ղից հեռանամ, որ նոքա այլեւս առիթ չունենան իմ
վրա յարձակվելու:

Օրգօն. Ոչ, զուք պիտի այստեղ մնաք, ա-
ռանց ձեզ ապրել եւս չարժէ:

S a r s իւ փ. Պատրաստ եմ գոհողութիւն ա-
նել,—միայն եթէ . . .

O r q o ն. Ի՞նչ . . .

S a r s իւ փ. Թողնենք, այլեւս չխօսենք այդ
մասին: Գիտեմ այսուհետեւ ինչպէս պիտի վարվիմ:
Պատիւը շատ փափուկ բան է, եւ իբրեւ ձեր բա-
րեկամ ես ամեն աւելորդ խօսք ու զրոյցի առաջ
պիտի առնենք Այսուհետեւ ձեր կնոջ հետ չեմ հան-
դիպի եւ ինձ չեք տեսնի . . .

O r q o ն. Ոչ, բնդհակառակն. դուք պիտի
տեսնվիք կնոջս հետ Թող զայրանան ամենքը: Ես
կամենում եմ, որ ձեզ անդադար կնոջս հետ տես-
նեն: Եւ գեռ այս չէ միայն կամեցածս. դոցա ամեն-
քին կատաղեցնելու համար ես կամենում եմ իմ
միակ ժառանգ ձեզ նշանակել . . . Եւ իսկոյն ևւեթ
իմ բոլոր գոյքս ձեր վրա պիտի հաստատել տամ:
Մի բարի եւ անկեղծ բարեկամ, իմ փեսայ գառնա-
լով, ինձ համար շատ աւելի թանկագին է քան թէ
որդիս, կիսա, ազգականներս: Համաձայն էք ար-
դեօք առաջարկութեանս:

S a r s իւ փ. Թող կատարվի Աստուծու կամ-
քը ամեն բանի մէջ:

O r q o ն. Իեղձ մարդ: Դեհ ուրիմն գնանք,
արձանագրութիւն կազմենք. Թող նախանձից եւ
զայրոյթից պայմեն իմ ազգականները:

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ԵՐԵՒՈՅՑԹ

ԿԱԷՄԱՏ ԵՒ ՏԱՐՏԻՎ

Կ շ է ա ն ս. Այս, այդ մասին ամենքը խօսում
են, հաւատացէք ինձ: Եւ բոլոր զրոյցները ձեզ պա-
տիւ չեն բերում: Ուրախ եմ, որ ձեզ համդիպեցի
յարմար ժամին կարծիքս մի երկու բառով ձեզ պար-
զորէն յայտնելու: Ես չեմ քննում ինչ որ խօսում
են, այլ միայն զործի էութիւնն եմ վերցնում: Հա-
մարենք թէ ամեն բանի մէջ մեղաւորն Դամիան է
եւ ձեզ զուր են մեղազրում: Մի՞թէ քրիստոնէի
պարտք չէ վիրաւորանքը ներել եւ իր սրաի մէջ
հանգցնել վրէմինդրութեան ամենայն ցանկութիւնն
եւ մի՞թէ ցանկալի է ձեզ համար, որ հայրական
տանից որդին աքսորված լինի: Հաւատացէք ան-
կեղծ խօսքիս, որ թէ մեծը եւ թէ փոքրը գայթակ-
ղած են այս զործով: Եւ եթէ խօսքս ձեզ համար
ընդունելի է, խաղաղացրէք ամեն բան, մեղմացրէք
ձեր բարկութիւնը եւ հաշտեցրէք որդուն հօրը հետ:

S a r s իւ փ. Աւազ, ես ինքս կկամենայի այդ
սրտանց, եւ գէպի Դամիար ոչինչ թշնամութիւն չու-
նիմ, ես նորան ներում եմ ա նեն բան եւ կցանկայի
նորան օգտաւէտ լինել: Բայց գժուար թէ Աստուծ
նորան ներէ: Եւ եթէ նա վերագառնայ այս տունը,
ես պիտի դուրս գնամ . . . նորա չարաչար վարմուն-
քից յետոյ, խայտառակութիւն կլինի, եթէ միասին
ապրինք: Ո գիտէ, ինչեր կսկսեն մտածել: Ամենքը

կասեն թէ ես ինձ յանցաւոր եմ ճանաչում, ուստի
եւ հաշովեցայ նորա հետ, որ սորանով կարողանամ
սոփակը նորան լռելու:

Կ շ է ա ն ս. Բոլոր ձեր փաստերը, պարոն, շին-
ծու են եւ անհիմն Եւ ի՞նչի դուք միշտ Աստու-
ծու անունով էք խօսում: Մի՞թէ նա յանցաւորին
պատժելն եւս չէ կարող առանց ձեզ: Թողէք եր-
կինքը, նա գիտէ ինչ պիտի անէ, իսկ դուք յիշե-
ցէք միշտ, առանց մարդկացին զրախօսութիւններին
ուշք դարձնելու, որ Աստուած պատուիրում է մեղ
ներել մեր վերաբերմամբ մեղանչողներին ի՞նչպէս,
մի՞թէ մի անմիտ կարծիք, թէ ինչ կասեն մարդիկը,
կարող է ձեզ արգելք լինել բարի գործ անելու: Ոչ,
ոչ, կատարեցէք միշտ Աստուծու պատուիրանը, նո-
րան ամեն շահերից բարձր դասելով:

Տ ա ր ս ի ւ զ. Ես ձեզ արգեն ասացի, որ սրբ-
տանց ներում եմ Դամիսին: Եւ այս նշանակում է
իհարկէ Աստուծու պատուիրանը կատարել: Բայց
այսօրվան խայտառակութենից յետոյ, ինձանից Աս-
տուած չէ պահանջում, որ նորա հետ միասին ապրեմ:

Կ շ է ա ն ս. Ուրիմն Աստուած է ձեզ պատուի-
րում նոյնպէս նորա հօր քմահաճոյքը կատարել, որը
զրկելով զաւակներին, իր բոլոր գոյքը ձեզ է ընծա-
յում: Եւ դուք Աստուծու առաջ մեղք չէք համա-
րում այդպէս վարվելով:

Տ ա ր ս ի ւ զ. Ինձ ճանաչօղներից եւ ոչ ոք
կարող է կասկածել, թէ ես շահասիրական ձզբո-
մունք ունէի: Այս աշխարհի բոլոր բարիքները ինձ
համար նշանակութիւն չունին: Բնդհակառակն այս
ընծան ընդունեցի միայն նորա համար, որ վախե-

նում եմ, մի՛ գուցէ չար եւ վնասակար ձեռք անցնէ
եւ չառերին գայթակղեցնէ, յանցաւոր գործերի ա-
ռիթ գառնալով: Իսկ ես բոլորը պիտի գործազրեմ
մերձաւորների բարեբաղդութեան եւ Աստուծու
փառքի համար:

Կ շ է ա ն ս. Եհ, բաւական է, պարոն, ի՞նչ
պէտք են այդ անհիմն նախագոտութիւնները ժա-
ռանգի վերաբերմամբ: Թողէք, առանց ձեզ նեղու-
թիւն տայլու, ժառանգութիւնը ստանայ նա, որին
վիճակված է, եւ դուք ազատ մնացէք մեղազրան-
քից: Զարմանում եմ թէ ի՞նչպէս էք ընդունել այդ-
պիտի ասածարկութիւնը: Զէ որ ջերմեանդ աս-
տուածապաշտիդ օրինական ժառանգի կողոպտիչ
կհամբաւեն: Իսկ եթէ ձեզ անկարելի է Դամիսի
հետ միասին ապրել, մի՞թէ աւելի լաւ չէր լինի, որ
ինքդ համեստութեամբ եւ պատուով հեռանայիք
քան թէ առանց որ եւ իցէ հիմքի դուրս ձգէին տա-
նից, ձեր պատճառով, հարազատ որդուն: Հաւատա-
ցէք, որ սա ձեր կողմից խոհեմութիւն կլինէր . . .

Տ ա ր ս ի ւ զ. Թողութիւն արէք, երեք եւ կէս
ժամ է, ես պէտք է եկեղեցի գնամ: Ներողութիւն,
որ ձեզ թողնում եմ:

Կ շ է ա ն ս. (Միայնակ) Կեղծաւո՛ր:

Բ. ԵՐԵՒԱՆՅԹ

ԿԱՄԻՐ, ԿԱԷՍՆՏ, ՄԱՐԻԱՆ ԵՒ ԳՈՐԻՆ

Գ ո ր ի ն. (Կեկանչին) Ոհ, պարոն, դուք պի-
տի օգնէք մեզ: Նորա հոգին տանջվում է մահա-
կան վշտով: Հայրը նշանակել է այս երեկոյեան ա-

մեն բան վերջացնել, որով Մարիանին յուսահասուշ թիւն է տիրում: Այս րապէիս պարոնը պիտի գայք թիւնը եմ ամեն ջանք գործ դնենք նորան համուկը որ, որ մեղ ամենքիս վրովիցնօղ այս անբաղդ գործը խափանենք:

Գ. ԵՐԵՒԱՅԹ

ԿԱՅԱՆՏ, ՄԱՅԻՍԻ, ԷԼՄԻՐ, ԴՕՐԻԵ ԵՒ ՕՐԳՈՆ

Օր զօն. Ուրախ եմ, որ ամենքդ այստեղ էք ժողոված: (Մարիանին) իսկ քեզ, սիրելիս, նուէր ունիմ տալու. պայմանագիրը պատրաստ է, բայց թէ ինչ պայմանագիր է, քեզ յայտնի է:

Մարիանի. (Չոքելով Օրգոնի առաջ) Ոհ, հայրիկ, ազաշում եմ ձեզ, ի սէր Աստուծուն, որը գիտէ իմ վիշտու. զիմում եմ զթալու ընդունակ սրտին, մի՛ բռնազատէք ինձ իրբեւ ծնօղ, թոյլ տուէք ես իմ կամքով վարվիմ: Ապա թէ ոչ ստիգմած կիխիմ ծննդիս օրը նզովի եւ կեանքի իւրաքանչիւր բոպէն միայն տանջանքներ կրերէ ձեր անքաղղական սրտին: Ոհ, եթէ յուսացածիս հակարագ աղջկան սրտին: Ոհ, համար ինձ քեզ մի խորհուրդ տալու...:

Օր զօն. (Առանձին, իրան յուզված զգալով) Քաջացիր, ոլ սիրս, անպատշաճ է ինձ այսպիսի թուլութիւնը:

Մարիանի. Տարտիւֆին փաղաքչելու, սիրելու ձեզ ամեննեւին արգելք չեմ կարող լինել: Տուէք նորան ձեր կարողութիւնը, եթէ քիչ է այդ, տուէք նորան իմ բաժինն եւս, ամենայն սրտով համաձայն եմ: Բայց գոնէ իմ անձ աղաս թողէք, թոյլ տուէք, որ երկնքի պարգևեած կեանքիս տիսուր մնացորդը մի վանքի մէջ անցուցանեմ:

Օր զօն. Սիս, լաւ յարմար միջոց է միանձնուհի գառնալու, երբ հայրը հարսանիք է պատրաստել: Բաւ է, վերկաց: Ուրախ աւելի կմերժես, այնքան աւելի կվշտանաս: Պատրաստվիր բարեբարոյ կին դառնալու, եւ այդ գաստրկ խօսքերով ինձ մի՛ վըրդումիր:

Դօր ին. Սիս, պարոն:

Օր զօն. Լոկիր գու: Բացարձակ արգելում եմ քեզ ձայն հանելու:

Կշան. Թոյլ տուր ինձ քեզ մի խորհուրդ տալու...

Օր զօն. Քո խորհուրդներիդ միշտ ուշադիր եմ եղել, նոքա խոնեմ են, խելացի են, սակայն այս գէպքում ինձ նոքա հարկաւոր չեն. այս պիտի իմանաս:

Էլմիր. Ես լոռում էի, խօսք չեմ գանում թէ ինչ ասեմ: Զարմացած մնացել եմ թէ ինչ աստիճանի կուրութիւն է տիրել քեզ, որ մոռանում ես կամ չես կամենում խմանալ թէ ինչեր արեց այսօր Տարտիւֆը:

Օր զօն. Ես հաւասար եմ միայն աչքիս տեսածին: Դու կամենում ես անպիտան Դամիսին պաշտպանել. դու քաշվեցար նորա սուտը բռնելուց,

որ կամենում էր այս խեղճ մարդու գլխին կապել:
Եթէ այդպէս լինէր, մի՞թէ զու կկարողանայիր այդ-
քան հանգիստ մնալ. զու բոլորովին ուրիշ կերպով
յուղլած պիտի լինէիր:

Է լ մի ր. Մի՞թէ մի անմիտ խոսառվանութիւն
կարող է ամեն կնոջ շփոթել, եւ մի՞թէ հարկաւոր
է անշուշտ բարկանալով եւ հայհայելով վերարերթիւնը
է անմար այդպիսի խօսքերը ծիծաղելի են եւ ա-
յնձ համար այդպիսի խօսքերը ծիծաղելի են եւ ա-
մենեւին չեմ սիրում աղմուկ հանել. Սւելի սիրում
եմ խելքով զործ տեսնել, քան թէ եղունդներով եւ
ատամեներով զինաւորիւլ եւ չշափած պատիւը
պաշտպանել. Սաստած աղատէ ինձ այսպիսի խմառ
տակութենից. Ես ուրիշ միջոց եմ հաւանում. Հա-
ւատա ինձ. մի երկու սառն խօսքն աւելի զգաս-
տացնում են անզգոյն մարդուն:

Օ ր գ օ ն. Վերջապէս, ես ամեն բան գիտեմ,
եւ ամենեւին չեմ կամենում խարպիւլ:

Է լ մի ր. Զարմանալի է քո յամառութիւնը
Բայց ի՞նչ կատէիր, եթէ անձամբ փորձէիր եւ տես-
նէիր, որ մեր ասածը ձշմարտութիւն է:

Օ ր գ օ ն. Ես տեսնեմ:

Է լ մի ր. Այս:

Օ ր գ օ ն. Անհստատալի է:

Է լ մի ր. Եթէ ես մի հնար գտնեմ, որ դու-
տեսնես, քո աչքերին պիտի հաւատա՞ս:

Օ ր գ օ ն. Զորի խօսքեր են:

Է լ մի ր. Ի՞նչ տեսակ մարդ ես: Ես քեզ չեմ
ասում թէ ինձ պիտի հաւատաս: Երեւակայիր թէ
յաջողեցրի նորան միեւնոյն անպատշաճ խօսքերը
կրկնել տալու, իսկ զու թագ կացած՝ ամեն բան տես-

նես եւ լսես, այս ժամանակ ի՞նչ կասես այս քո աս-
տուածապաշտ մարդու մասին:

Օ ր գ օ ն. Այն ժամանակ ես կասէի որ... Ես
ոչինչ չէ ասի... որովհետեւ այդ երբէք չէ կարող
պատահել:

Է լ մի ր. Ուրեմն մեղքը քո վզիոդ, ես չեմ կա-
մենում զրախօս լինել. ինձ մնում է առանց այլեւ-
այլութեան, խորամանկութեան զիմելով, բոլոր մեր
ասածը քեզ յայտնապէս ապացուցանել:

Օ ր գ օ ն. Շատ լաւ, խօսքիդ տէր եղիր: Տես-
նենք քո վարպետութիւնը, թէ ինչպէս պիտի ա-
սածդ կատարես:

Է լ մի ր. (Թօրիմին) Կանչիր նորան այսաեղ:
Գօրին. Նա խորամանկ է, զիւրութեամբ
մարդուն հաւատալու չէ:

Է լ մի ր. Անհոգ կաց. սիրահարված եւ անձ-
նասէր մարդը զիւրութեամբ է խարլում: Կանչիր
նորան այսաեղ: (Կղեանեսին եւ Մարիանին). Իսկ
զուք գնացէք այսաեղից:

Ե. ԵՐԵՒՈՅԹ

ԷԼՄԱՐ ԵՒ ՕՐԳՈՆ

Է լ մի ր. Այդ սեղանը այս կողմը քաշիր եւ
մտիր տակը:

Օ ր գ օ ն. Սեղանի տակ մանեմ:

Է լ մի ր. Այս, անհամեշտ է, որ դու թագ
կենաս:

Օ ր գ օ ն. Բայց ի՞նչի սեղանի տակ մանեմ:

Է լ մի ր. Ոհ, տէր Սաստած, թող տեսնենք

ինչ եմ անում: Դու յետոյ կյայսնես կարծիքդ: Դէ՛զ,
չոտ արա, քեզ չուսնեն եւ չսեն ձայնդ:

Օրգօն. ձշմարլիս որ զիջողութիւնս մինչեւ
յիմարութեան է համուռմ, բայց եւ այնպէս պիտի
տեսնեմ թէ ինչպէս կտանես այս գործը:

Էջմիածն. Կտեսնես ահա ինչ որ կլինի: (Օրգօ-
նին, որ արդին սեղածի տակ է). Համդիստ կաց եւ
մի՛ վրդովվիր, որքան որ օտարոտի խօսք ու զրոյց
անեմ Տարտիւֆի հետ: Ինչ որ ասեմ, ներելի է ինձ,
որովհետեւ քեզ այսպէս միայն պիտի համոզեմ: Ես
ակամայ քաղցրութեամբ այս սուտ աստուածապաշ-
տի զիմակը պիտի հանեմ: Ես ի հարկէ իր սիրահա-
րական ցանկութիւնները պիտի քաջալերեմ, որ նա
ազատորէն յայտնէ իր յանդուզն մտքերը եւ նորա
փափագներին համաձայն պիտի ձեւանամ, եւ կտես-
նես թէ նա ինչ աստիճան անմոտութեան պիտի հաս-
նէ: Այս միջոցին, երբ քո առաջ ամեն բան արդէն
կպարզվի, դու դուրս եկ եւ ալատիր քո ինո՞ք այս
խարեւայից: Բայց դու ինքդ գիտես, ինչ որ պիտի
անես: Ահա դալիս է: Նստիր եւ ամեններին չերեւիս:

Ե. ԵՐԵՒԱՅԹ

ԷԼՄԻՐ, ՏԱՐՏԻՐԵ ԵՒ ՕՐԳՈՆ (սեղածի տակ)

S a r s իւֆ. Դօրին ինձ ասաց թէ կամե-
նում էիք ինձ տեսնել:

Էջմիածն. Այս, գաղանիք ունիմ ձեզ յայտնելու:
Բայց նախապէս փակեցէք դուռը եւ ամեն կողմ նա-
յեցէք, որ ոչ ոք չուէ մեզ: (Տարտիւֆը փակուս է
դուռը եւ վերադառնում) Ես չեմ կամենում լսել

Կամ տեսնել այն խայտառակութիւնն, ինչ որ այստեղ
եղաւ. զուք եւս անկասկած: Դամիմն ինձ այն աս-
տիճան վրդովեցրեց ձեր վերաբերմամբ... Դուք
անշուշտ նկատեցիք թէ որքան ջանք էի զործ զը-
նում նորան համգարտեցնելու եւ համոզելու: Իսկ
յետոյ երկիւղից ու չուարտամից պատասխան ան-
գամ չէի գտնում: Բայց փառք Աստուծուն, ամեն
բան անցու եւ զործն աւելի յաջող եղաւ: Իմ ա-
մուսինս ձեզ յարգում է, ուստի ոչինչ կասկած չու-
նի ձեր մասին: Զար թեղուների առաջն առնելու
համար նա կամենում է, որ մենք անդադար միա-
սին լինինք: Ուստի ահա ես այժմ առաջ ուրիշց
քաշվելու, կարողանում եմ այսակեզ ձեզ հետ առան-
ձին փակված լինել, եւ բանալ ձեր առաջ իմ ջերմ
սիրա, թէպէս գուցէ շտապում եմ:

S a r s իւֆ. Դժուարանում եմ, տիկին, հաս-
կանալ ձեր խօսակցութիւնը: Փոքր ինչ ասաջ դուք
ինձ հետ ուրիշ կերպով էիք խօսում:

Էջմիածն. Այս, իմ խօսքերից արգէն նեղացել
էք: Ուրեմն որքան սակաւ էք ճանաչում դուք կա-
նացի սիրալու Միթէ դուք չգիտէք թէ ինչ է կա-
մենում նա յայտնել, երբ նա այնքան թոյլ կերպով
է պաշտպանում իրան Մեր մէջ ամօթխածութիւնը
պատերազմում է ցանկական զգացմունքի հետ:
Մենք ամեն միջոց եւ արհեստ գործ ենք զնում
մեզ ասնջող աէրը ծածկելու եւ ակամայ ամօթից
Երբէք չենք կարող յայտնապէս խոսառվանել: Սա-
կայն ճշմարտութիւնը թաղցնել չէ յաջողում, եւ
սրաի ձգտումը բաւական իմաց էում է: Բայց ես բա-
ւական ազատորէն խօսեցի ձեզ հետ առանց ինա-

յելու կանացի ամօթխածութիւնը՝ Բայց որովհետեւ
խօսքս բերանիցս թռաւ, կասեմ ահա. ի՞նչի ես
այնքան սկսեցի Դամիոնն համոզել, ի՞նչի կլսէի
այնքան հաճոյքով ձեր սրտի խոստովանութիւնը,
ի՞նչի կընդունէի այն ամենը ինչպէս որ տեսաք,
եթէ այդ սրտի առաջարկութիւնը ինձ հաճելի չիւ-
նէր: Եւ երբ աղջկանս հետ առումնանալուց աշխա-
տում էի ձեզ յետ կանգնեցնել, ինչ պիտի հասկա-
նալիք այս իմ թափանձանքից, եթէ ոչ, առ ձեզ
ունեցած համակրութիւնն եւ ցանկութիւնն, որ ձեր
սիրով անբաժան միայն ինձ պատկանէր ամբողջա-
պէս:

Տարսիւֆ. Առկասկած, սիկին, չափազանց
քաղցր է սիրելի շրթունքից այդ տեսակ խօսքեր
լսել: Ես այդ խօսքերի մեղքը առաջին անգամ եմ
ծաշակում կեանքիս մէջ: Չեզ հաճելի լինելը իմ
ծայրագոյն ցանկութիւնս է, ձեզանից սիրված լի-
նեն ինձ համար երջանկութիւն է: Սակայն սիրու
փափագում է ակամայ կասկածանքից ազատ մնալ,
ուստի թող տուէք համոզվելու թէ այս խօսքերը
հնարագիտութիւն չեն ստիպելու ինձ, որ Մարիանի
հետ ամուսնանալուց հրաժարվիմ, եւ եթէ պէտք է
ազատօրէն խօսեմ ձեզ հետ, ես այն ժամանակ մի-
այն կհաւատամ քաղցր խօսքերիդ, երբ ինձ փոքր
ինչ արժանացնելով իմ փափագած ձեր չնորհին, իմ
հոգուս մէջ ջերմ հաւատ կհաստատէք ձեր սիրա-
սուն գգուանքներով:

Եղմիւր. (Հազրով նշան և տաղիս անուսնին).
Ո՞րքան շտապում էք գուք, Այդ կերպով կարելի է
սրտի ամենայն զգացմունքը խրանեցնել: Ո՞րչափ

գժուար էր ինձ յայտնել ձեզ իմ միտքս, իսկ գուք
բաւական չէք համարում գեռ եւս այսքանս: Մի՞-
թէ ձեզ բաւականացնելու համար անշուշտ հարկա-
ւոր է մի չօշափելի փաստ:

Տարսիւֆ. Որքան սակաւ է մարգու ար-
ժանիքն, այնքան սակաւ է նորա յոյալ: Մարդկացին
փափագները խօսքերով չեն յազենում: Մարդս կաս-
կածով է նայում իրան հասած փառաւոր վիճակին,
եւ կամննում է վայելի, որ ապա թէ կարողանայ
հաւատալ: Ես որ արժանի չեմ համարում ինձ ձեր
սէրին, երջանկութիւնն կասկածելի է երեւում ինձ:
Ես չեմ կարող հաւատալ, իմ տիկին, մինչեւ որ չօ-
շափելի գրաւականով չհամոզէք ինձ:

Եղմիւր. Տէր Սատուած, ձեր սէրը կատարեալ
բննակալի պէս է ներգործում: ալեկոծում է արինսս,
մթնեցնում է միտքս, եւ բռնութեամբ է յայտնում
իր ցանկութիւնը: Ախ, գժուար է երեւում ձեր ձեռ-
քից աղասավել, շունչ քաշելու ժամանակ չէք կա-
մենում տալ: Մի՞թէ վայել է այդպիսի սասակու-
թիւն բանեցնել: Ի՞նչն է ստիպում այդչափ շտապով
կատարել ցանկութիւնդ, առանց ինայելու դէպի
ձեզ զգացած սէրը:

Տարսիւֆ. Բայց եթէ դուք բարեհած աչ-
քով էք նայում ինձ, հապա ուրեմն ի՞նչի էք մեր-
ժում ինձ ապացոյց տալու:

Եղմիւր. Բայց ի՞նչպէս համաձայնեմ ձեր
ցանկացածին. չի վշտանայ մի՞թէ երկինքը, որի մա-
սին գուք այնքան յաձախ էք խօսում:

Տարսիւֆ. Ոչ, եթէ իմ փափագներին մի-
այն երկինքը պիտի ընդդիմանայ, այդպիսի արգելքը

ինձ համար նշանակութիւն չունի, եւ այդ տեսակ
բան սիստի չլրդովէ ձեր սիրտը:
Է լ մ ի ր. Սակայն երկնային զատաստանը, ո-
րից մեղ այնչափ երկխղ են տալիս:

Տ ա ր ս ի ւ գ. Ես կհեռացնեմ ձեզմնից, տի-
կին, այդ ծիծաղելի երկիւղը: Ես ունիմ այդպիսի
կասկածները փարատելու հնար: Իհարկէ կան վա-
յելութիւններ, որոնք արգելում է Աստուած, բայց
կարելի է մի կերպ յարմարացնել: Մարդս զանազան
կարիքներ ունի, եւ այն կարիքների հետ մեր խիզ-
ճը յարմարացնելու գիտութիւն ունինք, եւ մի վաս
գործողութիւն կարելի է միշտ նպաստակի մաքրու-
թեամբ արդարացնել: Այս գաղտնիքները, տիկին,
ես ձեղ կսովորեցնեմ, միայն թէ բոլորովին վստա-
հացէք ինձ, բաւականութիւն տուէք իմ ցանկու-
թեանս եւ ոչինչ երկխղ մի՛ ունենաք: Ամեն բանի
պատասխանատուն ես եմ միայն, բոլոր մեղքը իմ
վկիս: (Եղմիւր խիս հազում հ) Դուք սասափի
հազ ունիք, տիկին:

Է լ մ ի ր. Այս, չարաչար տանջում է ինձ:

Տ ա ր ս ի ւ գ. Ահա ձեղ մի կտոր մատուտակի
բոյս, սա օգտաւէտ է:

Է լ մ ի ր. Ոչ, յամառ յարբուխ ունիմ, եւ ոչ
մի դեղ չի օգնի ինձ:

Տ ա ր ս ի ւ գ. Սաստիկ նեղացնում է՞ ձեղ:

Է լ մ ի ր. Այս, անտանելի կերպով:

Տ ա ր ս ի ւ գ. Ուրիմն վերջապէս համաձայն
էք զիջանել չամորված պիտի լինիք, որ մեր զալտ-
նիքը ոչ ոք չի իմանայ: Իսկ չարիքն այն ժամանակ
է չարիք համարվում, երբ յայնի է: Իհարկէ զայ-

թակզութիւն է աշխարհի առաջ մեղանչել, իսկ
գաղանի մեղքը չէ կարելի մեղք համարել:

Է լ մ ի ր. (Կրկին հազերով եւ սեղանին խիե-
ղով) Ե՞ս, ի՞նչ անեմ, տեսնում եմ, որ ինձ մնում է
զիջանել եւ բոլորովին անձնատուր լինել ձեզ: Զեղ
հետ վիճեն անկարելի է. այնքան թախանձում էք:
Իհարկէ ցաւալի է այդ քայլն անել եւ ակամայ եմ
անում, բայց որովհեան ստիպում էք ինձ, որով-
հետեւ չէք կամենում հաւատալ խօսքիս, եւ ան-
շուշա աւելի համոզիչ սպացոյցներ էք կամենում,
ի՞նչ արած, սիստի բաւականութիւն տամ ձեզ: Բայց
եթէ այս գործը յանցանք է, աւելի վատ է ինձ բռնա-
դատովի համար. հարկաւ յանցանքն իմս չէ:

Տ ա ր ս ի ւ գ. Այս, տիկին, ես ձեղ ասացի, որ
ամեն բանի պատասխանատուն ես եմ:

Է լ մ ի ր. Բայցէք մի փոքր գուոր, նայեցէք
խնդրեմ, մի՛ գուցէ ամուսինս այս պատշգամում
լինի:

Տ ա ր ս ի ւ գ. Ի՞նչ հարկ կայ այդքան մտա-
հող լինել նորա մասին: Ե՞ս, նա այնքան պարզամիտ
է, որ մեր մէջ միայ, նորան կարող ենք զիսից ցա-
նել: Մեր ամեն խօսակցութիւնները նա իր համար
փառք է համարում. եւ ես նորան այն աստիճանին
եմ հասցել, որ նա ամեն բան կտեսնէ, եւ ամե-
նելին չի հաւատայ:

Է լ մ ի ր. Թող այզպէս լինի, բայց եւ այնպէս
խնդրում եմ զնացէք մի բոպէ եւ ամեն կողմ մի
լաւ նայեցէք:

Զ. ԵՐԵՒԱՅԹ

ԷԼՄԻՐ ԵՒ ՕՐԳՈՆ (դուրս գալով սեղանի տակից)

Օր զօն. Ահա արգարեւ սարսափելի գարշելի մարդք Խելքս վրաս չմնայ, եւ այս բոլորն ինձ կատաղեցնում է:

Էշմիր. Ի՞նչի այդչափ շուռ դուրս եկարդես ժամանակ չէ, զարձեալ միեւնոյն տեղը մտիր եւ սպասիր վախճանին հաստատ համոզվելու. միմայն կատածների համար կարելի չէ այդքան դաշտանալ:

Օր զօն. Ոչ, սորանից առելի զաղթալի մարդ դժոխքից եւս չէր կարող դուրս դար:

Էշմիր. Ախ, Աստուած, պէտք չէ այդպէս զիւրին կերպով հաւատալ, սպասիր, որ հաստատ կերպով համոզվիս: Մի՛ շտապիր. վախճանում եմ թէ մի՛ դուցէ սիսալիս: (Օրգօնին բացցնում է իր եւ սեւում):

Է. ԵՐԵՒԱՅԹ

ԷԼՄԻՐ, ՕՐԳՈՆ ԵՒ ՏԱՐՏԻՔ

Տարսիւ իւ գ. (Չեսնելով Օրգօնին) Ամեն բան, ամելին, նպաստում է իմ երջանկոթեանը, իմ աչքովս ամբողջ բնակարանը դնեցի: Ոչ ոք չկայ: Հոգիս յափշտակմամբ հրացած է. (մօտենում է Էշմիրին բազկատարած նորան գրկելու, եղմիրը բաշվում է. Տարսիւ իւ Տանելով Օրգօնին):

Օր զօն. (Կանգնեցնելով Տարսիւ իւ ն) Հան-

դարտիլիր: Զափաւորիր սիրահարական եռանդգ: Ահա ձեզ աստուածապաշտ: Լաւ չէ այդքան կրքին ենթարկվել: Ոհա ինչ են եղել քո սրբազնն խորհուրդներգ: Դու կամենում էլոն կնոջս եւ աղջկանս միանգամայն զլորել խայտառակութեան անդունդը: Ես երկար ժամանակ կատկած չէի տանում միամտաբար նայելով զործին: Բայց բաւական է. ամեն բան լսեցի եւ տեսաց, աւելին այլեւս ինձ պէտք չէ:

Էշմիր. (Տարսիւ իւ ն) Ուրիշ հնար չունեիք. ստիպված էի այսպէս վարվել ձեզ հետ:

Տարսիւ գ. (Օրգօնին) Եւ դուք հաւատում էք թէ . . .

Օր զօն. Թողէք, բաւական է. առանց աղմուկի, Տէրը ձեզ հետ:

Տարսիւ գ. Իմ նպատակն . . .

Օր զօն. Ասացի արդէն՝ թէ ոչինչ չեմ կամենում լսել, այս բողէիս դուրս գնացէք տանիցու:

Տարսիւ գ. Հապա, ի՞նչպէս չէ: Դուք պիտի դուրս գնաք, որ տան տէրի պէս էք խօսում: Տոնը ինձ է պատկանում եւ ոչ ձեզ. այդ դուք պիտի զիսենաք: Ես ձեզ ցոյց կտամ, որ իգուր էք զիմում այս ստոր միջոցներին ինձ վիրաւորելու համար, եւ թէ անկարելի է այսպիսի անիրաւութիւնն եւ թէ ես զիսեմ ինչպէս պատժելու է զըրպարտութիւնը: Ես թոյլ չեմ տայ, որ այս ստորէան վիրաւորէք Աստուծուն, եւ դուք կզջաք ձեր յանդգնութիւնը, կամենալով ինձ այս տանից դուրս ձգել:

Ը. ԵՐԵՒՅՑԹ

ԿԱՌԱՆ ԵՎ ՕՐԳՈՆ

Ելմիր. Սյո ի՞նչ է նշանակում Նա ի՞նչ է կամենում ասել:

Օրգօն. Զգիտեմ ձշմարիտ ի՞նչ պիտի անեմ:
Ելմիր. Ի՞նչ է նշանակում:

Օրգօն. Սարսափելի բան է: Նա ձշմարիտ է ասում: Լսեցիր ի՞նչ ասաց. այս առողջ նորան եմ ընծայել:

Ելմիր. Ի՞նչպէս թէ ընծայել:

Օրգօն. Սյո, այդպէս է: Բայց դեռ աւելի սոսկալին կայ:

Ելմիր. Ի՞նչ կայ:

Օրգօն. Ամեն բան կիմանաս ... Այժմ զնամ շուռ անենեմ, այնտեղ վերեւն է արդեօք այն արկդիք Ափոս ...

Ե. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ԵՐԵՒՅՑԹ

ԿԱՌԱՆ ԵՎ ՕՐԳՈՆ

Կշկան. Ո՞ւր ես այդպէս շաապում:

Օրգօն. Ո՞ւր, ես ի՞նչ գիտեմ ուր:

Կշկան. Կարծում եմ, վաս չէր լինի, եթէ ամենքս միապին ժողովը եւ խորհինք թէ ինչ անելու է այս դէպքում:

Օրգօն. Իմ արկդիքը ինձ հանգիստ չէ տա-

լիս: Ամեն բանից աւելի նա է ինձ յուսահատեց-նում:

Կշկան. Ի՞նչ կար այն արկդիքի մէջ:

Օրգօն. Ահա ինչ . . . այդ արկդը իմ մօտ թողեց մի փախստական բարեկամ, իսկ մէջը թըղ-թեր կային . . . եւ ինձ զգուշացրեց, որ այն թղթե-րից կախումն ունին նորա կեանքը եւ բոլոր գոյքը:

Կշկան. Հապա ի՞նչի տուիր Տարախւֆին:

Օրգօն. Ի՞նչ մեղքս պահեմ. մի տեսակ ան-գիտակցութեամբ յայնեցի նորան, իսկ նա սկսեց ինձ համոզել, որ արկդը իրան ասամ պահելու, կա-մնալով ինձ ազատնել այնքան վտանգաւոր բանից, որպէսզի խուզարկութեամն միջոցին կարողանամ ամենայն համարձակութեամբ հերքել եւ ստիպված չըլինիմ խղճահարվելով երգումն անել ձշմարտու-թեան գէմ:

Կշկան. Սյո, շատ թեթեւամիտ կերպով ես վարվել. թէ ընծայումն, թէ այս վատանութեանդ շատ վշտի պատճառ կարող են զանալ: Եւ երբ այս մարզը քեզ այդչափ կաշկանդել է, ո՛րչափ անխո-հեմութիւն է քո կողմից վերջը այդպէս խիստ վար-վելու: Դու պիտի մի կերպ համբերութեամբ եւ խո-հեմութեամբ վարվէիր:

Օրգօն. Հապա ինչ գիտէի թէ այս համեստ խննարն արտաքին երեւոյթի տակ այնքան կեղծաւոր սիրտ եւ չար հոգի կլինին: Իսկ ես նորան ըն-դունեցի երբ բոլորովին աղքատ եւ թափառաշրջկի էր . . . Վերջապէս, երգէք այլ եւս մարդիկներին հաւատալու չեմ: Սարսափելի կերպով կատեմ այ-սուհետեւ նոցա, եւ այդպիսի խարերայ աստուա-

ծապաշտների համար սատանայից աւելի վաս կլինիմ:

Կ շ է ա ն ս. Ի՞նչ պէտք է քո զայրոյթը: Դու
ոչ մի բանի մէջ չափաւորութիւն չունիս: Դու եր-
բէք ուզիղ զատել չունիս, և միշտ ծայրայեղու-
թիւնների մէջ ես լնկնում: Դու արդէն տեսնում
ես, որ խարված ես և այժմ հասկացար, որ մենք
իրաւունք ունէինք, երբ քեզ զգուշացնում էինք:
Եւ քո սխալն ուզգելու համար, ի՞նչի ես աւելի
մեծ սխալ անում, բոլոր աղնիւ մարդիկներին մի
անպիտան գաւաճանի հետ խառնում: Արդ եթէ մի
անզգամը քեզ անիրաւութեամբ խարսում է, մի՞թէ
ամենքն եւս խարերայ են, եւ մի՞թէ չկայ աշխար-
հիս մէջ ձշմարիտ ասսուածապաշտութիւնն: Թող այս
անմիտ եղակացութիւնները, ծայրայեղութիւններն
աւելորդ են: Զգուշանալու է անզգամին յարգանք
տալուց, բայց ձշմարիտ մարդու հետ եւս յանցանք
է անարդարաբար վարլել: Խոկ եթէ կամենում ես
ծայրայեղութեան մէջ լնինել, աւելի լաւ է ամեն-
քին լաւ մարդիկ համարել քան թէ չար եւ ապա-
կանված:

Բ. ԵՐԵՒՆՅԹ

ԱԼԵՍ, ՕՐԳՈՆ, ԴԱՄԻՍ, ՏԻԿԻՆ, ՊԵՐԵԿԻ, ԷԼՄԻՐ, ՄՍՐԻՄԱՆ ԵՒ ԴՈՐԻՆ

Դ ա մ ի ս. Սա ի՞նչ է, հայրիկ, մի՞թէ այդ
ապահովիք սպաննալիք է տալիս ձեզ, ձեր ամենայն
բարերարութիւնը մոռաննալով: Իր զազրալի ամբար-
տաւանութեամբ ձեր բարութիւնը ձեր դէմ է դործ
դնում:

Օ ր գ օ ն. Այս, սիրելի որդիս: Եւ ես չափա-
շանց վշտացած եմ:

Դ ա մ ի ս. Դէն ես այդ աւազակի ականջները
կկտրեմ, միայն թոյլ տաւէք լինձ, ես կխեղզեմ այդ
անզգամին: Ձեր փոխարին ես հաշիւս կտեսնեմ նո-
րա հետ: Նորա հոգին կհանեմ, կտեսնէք:

Կ շ է ա ն ս. Դու խափէս իբրեւ երիտասարդ
ես խօսում: Չափաւորիր խնդրում եմ քո ջերմ ե-
ռանդդ: Ներկայ ժամանակում բոնութեամբ չես կա-
րող դործդ գլուխ բերել:

Գ. ԵՐԵՒՆՅԹ

ԱԼԵՍ, ՕՐԳՈՆ, ԴԱՄԻՍ, ՏԻԿԻՆ, ՊԵՐԵԿԻ, ԷԼՄԻՐ, ՄՍՐԻՄԱՆ ԵՒ ԴՈՐԻՆ

Ծ. Կ ր ն է շ. Սա ի՞նչ է: Սարսափելի բաներ
եմ լսում այստեղ:

Օ ր գ օ ն. Այս, այդպէս է. Ես ինքս ականա-
տես եղաք: Ահա իմ բարեկամութեան վարձատու-
թիւնը Թշուատ աղքատ մարդուն ինամատար լի-
նեմ իբրեւ եղօր, տուն տեղ ապրուստ տամ, ամեն
օր ընծաներով լցնեմ նորան, հարազատ գուսարս
եւ ամբողջ հարստութիւնս տամ նորան. Խոկ նա,
իբրեւ անազնիւ, իբրեւ մի աւազակ, ամենակեղ-
տու մաքով կնոջս զայթակղեցնել է աշխատում:
Եւ զեռ չբաւականացած իր ստոր փորձերով, սպառ-
նալիքներ է տալիս, իմ բարերարութիւնների փո-
խարէն, եւ կամենում է ինձ կործանել, իմ անմիտ
բարութեամբ՝ նորան տուած իրաւունքներից օգուտ
քաղելով, եւ ինձ դուրս անել իմ աներից եւ գլորել

ինձ նոյն թշուաստթեան մէջ, որից ևս նորան հա-
նեցի:

Դօրին. Խեղճ ողորմելի:

Տ. Պէրնէկը. Ոհ, չեմ կարողանում հաւա-
տալ, որ նա այդքան գարշելի կերպով վարվել կա-
րողանար:

Օրգօն. Ի՞նչ:

Տ. Պէրնէկը. Գիտես — բարի, աստուածա-
պաշտ մարդիկ նախանձ են շարժում միշտ:

Օրգօն. Ի՞նչ էք կամենում գորանով ասել,
մայր իմ, չեմ հասկանում:

Տ. Պէրնէկը. Այս, որ քո տանը օտարութ-
կեանք են վարում, եւ ամենքին յայտնի է թէ այս
տան մէջ ո՛րքան ատելութեամբ են վարվում Տար-
տիւֆի հետ:

Օրգօն. Ի՞նչ գործ ունի նախանձը այն բանի
հետ, ինչ որ ձեզ ասում եմ:

Տ. Պէրնէկը. Հարիւր անդամ ես քեզ ասած
եմ գեռ մանկութեանդ ժամանակից, թէ առաքինու-
թիւնը աշխարհիս մէջ միշտ հալածված է. Նախան-
ձու մարդիկը կմունեն, իսկ նախանձը՝ ոչ երբէք:

Օրգօն. Բայց ի՞նչ յարաքերութիւն ունին
ձեր խօսքերը այսօր պատահած գործի հետ:

Տ. Պէրնէկը. Քեզ հարիւրաւոր առասպելներ
ասած կլինին նորա մասին:

Օրգօն. Ձեզ ասացի, որ ես ինքս աչքով
տեսայ ամեն բան:

Տ. Պէրնէկը. Այս, ատող մարդիկների չարա-
խօսութիւնը սահման չունի:

Օրգօն. Այս, մայր իմ, դուք ինձ կատա-

զեցնում էք, ես ձեզ ասում եմ, որ ես ինքս իմ աչ-
քովս տեսայ նորա գարշելի վարմունքը:

Տ. Պէրնէկը. Մարդկային լեզուները թու-
նաւոր են, եւ այս աշխարհի մէջ ոչինչ չէ կարող
պաշտպանվել նոցա գէմ:

Օրգօն. Շատ զարմանալի բան է գուրս գա-
լիս ես ասում եմ, թէ ես ինքս տեսայ, լսում էք,
ահա այս իմ աչքերովս ես ինքս ամեն բան տեսայ:
Մի՞թէ կամենում էք ականջներումդ փող փէմ եւ
չորս մարդու տեղ գոչեմ, որ ամեն բան ես ինքս
տեսայ:

Տ. Պէրնէկը. Տէր Աստուած, շատ անգամ
արտաքինը մեղ խարում է: Եւ չէ կարելի միշտ
դասել այսպէս, ինչպէս որ արտաքուստ երեւում է:

Օրգօն. Համբերութիւնս հատաւ:

Տ. Պէրնէկը. Մարդկի սովոր են սիսլ կաս-
կածներ ենթագրել, եւ շատ անգամ բարին չար են
համարում:

Օրգօն. Իհարկէ, ես մարդասիրական մի հո-
գատարութիւն պիտի համարէի կնոջս գրիելու նո-
րա ցանկութիւնը . . .

Տ. Պէրնէկը. Իհարկէ մի մարդուն մեղաղըե-
լու համար պէտք է ստոյգ պատճառներ ունենաս:
Դու պիտի սպասէիր, ըոլորովին հաստատ իմանայիր
գործը:

Օրգօն. Տէր Աստուած, աւելի հաստատ ի-
մանալու: Ուրիմն, սիրելի մայր իմ, ես պիտի սպա-
սէի, որ իմ աչքիս առաջ նա . . . ներողութիւն,
դուք արդէն անմիտ բան պիտի ասել ասյիք:

Տ. Պէրնէկը. Իսկ ես, նորա մաքուր նոգին

Եւ բարեպաշտութիւնը ճանաչելով, մտածել անգամ չեմ կամննում, որ նա ձեր հնդաղրած խայտառակութիւնը գործէր:

Օր զօն. Եթէ գուք իմ մայր չլինէիք, չզիտեմ ինչ կասէի. այսքան զայրանում եմ:

Դօրին. (Օրգօնին) Այս աշխարհի արդար հատուցումն է, պարոն, գուք մեղ չէիք հաւատում, այժմ ձեր ասածին չեն հաւատում:

Կշէան և ս. Մենք դատարկաբանութեամբ ժամանակ ենք կորցնում փոխանակ մի ելք գտնելու: Այս անամօթի մասին պէտք չէ անհոգ մնալ:

Դամին. Միթէ այն աստիճանի ստորութեան կհասնէ:

Էշմիր. Ինձ թուում է թէ նա այդքան չի յանդնի: Նորա ապերախտութիւնը չափազանց նկատելի կլինի:

Կշէան և ս. (Օրգօնին) Պէտք չէ թոյլ տալ. նա իր ձեռին միջոցներ ունի քո դէմ յաջողութեամբ ներգործելու: Երբեմն ամենաչնչին բաներ մարդութշուառութեան պատճառ են գառնում: Եւ ես կրնում եմ. այնքան իրաւունքներ նորան տալուց յետոյ, այդ աստիճան պէտք չը նորան դրգուլ:

Օր զօն. Այդ ճշմարիտ է, բայց ի՞նչ արած: Այդ գաւաճանի անարգութիւնն ինձ այն աստիճան զայրացրեց, որ զլուխս կորցրի:

Կշէան և ս. Ցանկալի էր, որ ձեր երկուսի մէջ մի կերպ հաշտվելու հնար գտնվէր:

Էշմիր. Ախ, եթէ ես իմանայի, թէ նա իր ձեռին այդպիսի մի զէնք ունի, ես այսքան խոռվութեան պատճառ չէի տայ: Եւ . . .

Օր զօն. (Դօրինին, տեսնելով Լոյալին ներս մտնելիս) Ո՞վ է նորից, մի իմացիր: Ես բոլորովին անկարող եմ այսօր հիւրեր ընդունելու:

Դ. ԵՐԵՒԱՅԹ

Ա. ԵՍՆՏ, ՕՐԳՈՆ, ԴԱՄԻՍ, ՊԵՐՆԵԼ, ԷԼՄԻՐ,
ՄԱՐԻԱՆ, ԴՈՐԻՆ ԵՎ ԼՈՅԱԼ:

Լոյալ. (Դօրինին բատերաբեմի խորցում) Ողջոյն ձեզ, սիրելի քոյրիկ. յայտնեցէք խնդրում եմ, որ ես կամննում եմ պարոնի հետ խօսել:

Դօրին. Նա միայնակ չէ, եւ հազիւ թէ նա այժմ կարողանայ ձեզ տեսնել:

Լոյալ. Նորանից ամեննեւին ժամանակ խելու չեմ: Իմ այցելութեանս պատճառը կարծեմ նորան անհաճելի չի լինի: Ես եկել եմ մի գործի համար, որից նա բաւական գոհ կլինի:

Դօրին. Դուք ո՞վ եք:

Լոյալ. Ասացէք միայն իրան, որ Տարտիւֆն է ուղարկել ինձ նորա մօռ:

Դօրին. (Օրգօնին) Մի անձանօթ մարդ Տարտիւֆի կողմից եկել է մի գործի համար, որից ասում է շատ գոհ կլինիք:

Կշէան և ս. (Օրգօնին). Պէտք է տեսնես թէ սա ինչ մարդ է, եւ թէ ինչ է կամննում:

Օր զօն. Երեւի մեզ հաշտեցնելու համար է եկել: Հապա ինչ կարող եմ նորան ասել:

Կշէան և ս. Քո զայրոյթը ամեննեւին պիտի ցոյց չափ: Եւ եթէ հաշտութեան մասին խօսէ, լսիր նորան:

Լօյալ. (Օրգոնին) Ողջոյն ձեզ, պարոն . . .
Աստուած թող կործանէ ձեզ վնասել կամեցօղեն
եւ մաղթում եմ ձեզ առնենայն յաջողութիւն:

Օրգօն. (Կղեանէսին ցած ձայնով). Այս սիրալիք ներածութիւնը իմ ասածին համեմատ է եւ հաշտութիւն կամենալու նշան է:

Լօյալ. Ձեր բոլոր գերգաստանն ինձ համար միշտ յարգելի էր, եւ ես ձեր պատուական հօր խոնարհ ծառայ էի:

Օրգօն. Ներեցէք, պարոն, ամաչում եմ ճըշմարխ, որ ձեր զէմքը անծանօթ է ինձ եւ ոչ ձեր անունը դիտեմ:

Լօյալ. Ես նօրմանգայի եմ, Լօյալ է անունս, դատական կարգադրիչ, Քառասուն տարի է արդէն, որ բարեխղճաբար եւ պատուիլ վարում եմ այս պաշտօնը, չնայելով նախանձօդնելին: Եւ այժմ եկած եմ, պարոն, դատարանի կարգադրութիւնը ձեզ յայսնելու:

Օրգօն. Ի՞նչ: Դուք եկել էք այստեղ . . .

Լօյալ. Մի՛ բարկանաք, ինսդրում եմ: Ես դատարանի տնօրինութիւնը պիտի կատարեմ: Պատուիրված է միայն, որ դուք իսկոյն ընտանիքիդ հետ թողնէք այս տունը եւ դուրս տանէք այստեղից ձեր գոյքը անցապաղ, առանց յետաձգելու:

Օրգօն. Ես այս տունը թողնեմ:

Լօյալ. Այս, դուք գիտէք արդէն, որ այս տունը այժմ պ. Տարտիւֆին է պատկանում: Այսուհետեւ ձեր կալուածների տէրը եւ անօրէնը նա է պայմանագրի գորութեամբ, որը մօսս է, պայմանագրը օրինաւոր է. մի խօսք չէ կարելի ասել:

Դա մի ս. (Լօյալին) Զարմանում եմ ես ձեր յանդգնութեան վրա:

Լօյալ. (Դամիսին) Ձեզ հետ դործ չունիմ, պարոն, (յոյց տաղով Օրգոնին) այլ ուղղակի նորու հետ. նա հասկացօլ է եւ բարեկարոյ եւ դիտենալով աղնիւ մարդու պարուքը, ամննեւին չի հակառակի արդարագատառութեան:

Օրգօն. Սակայն . . .

Լօյալ. Այս, ես համոզված եմ, որ մի միշտինի համար դուք ինձ չէք ընդգիւմանայ եւ իբրեւ աղնիւ քաղաքացի դուք ինձ թողլ կտաք, որ օրէնքի հրամանը ի կատար ածեմ:

Դա մի ս. Զգոյշ եղէք, պ. դատական կարգադրիչ, որ գաւազանաշարժութեան հետ չծանօթանաք այստեղ:

Լօյալ. (Օրգոնին) Թող ձեր որդին հեռանայ: ապա թէ ոչ թէեւ ցաւելով, սափրված կլինիմ արձանագրութիւն կազմել:

Դօրին. (Առանձին) Այս օրինապահ պարոնը բաւական ապօրինի է երեւում:

Լօյալ. Ես ամեն լաւ մարդկների հետ մեղմ եմ վարդում: Ես զիտամեր յանձն առայ ձեր դործը ձեր պատուի եւ յարմարութեան համար: Եթէ իմ տեղս մի ուրիշը նշանակվէր, որ ձեզ իմ չափ չէ յարգում, կարող էր խստութեամբ վարվել ձեզ հետ:

Օրգօն. Սորանից աւելի վատ ի՞նչ պիտի լինէր, ամբողջ մի ընտանիք արտաքսում էք սեփական տանից:

Լօյալ. Ժամանակ կտամ ձեզ. հրամանի կատարումն մինչեւ վաղը կյետաձգեմ: Միայն թէ ես

գիշերը կգամ այստեղ անցուցանելու մի տաս կըտ-
րիձների հետ, առանց ձայն եւ աղմուկ հանելու: Եւ
միայն ձեւի համար պէտք կլինի, ներեցէք, պառ-
կելուց առաջ ինձ բերել ձեր դուների բանալիները:
Ես կհոգամ, որ դուք անհանդիսա չլինիք, եւ ոչ-
ինչ անյարմար բան թոյլ չեմ տայ: Իսկ վաղ առա-
ւոտեան ամեն բւն պիտի դուրս տանէք այստեղից.
իմ մարդիկ եւս կօգնեն ձեզ: Նոքա արի են, տու-
նը շուտ կդատարիեն: Կյուսամ, որ ինձանից աւելի
զիջող դժուար թէ գանէիք: Եւ որովհետեւ այսչափ
մարդասիրութեամբ եմ վարդում ձեզ հետ, ինսքրում
եմ պատուիրեցէք, որ ոչ ոք արգելք չլինի ինձ իմ
ստացած պատուէրը կատարելու:

Օր զօն. (Կիշանտին) եմ վերջին հարիւր ոս-
կին ամենայն ուրախութեամբ կտայի, եթէ այս
բթամիտը ամենախիստ հարուածների համը առնէր:
Կ շ ա ն ս. Թող գործը չփչացնենք:

Դ ա մ ի ս. Սորա յանզգնութիւնն այնչափ
վրդովեցուցիչ է, որ չեմ կարողանում ինձ զապել-
ձեռս սաստիկ քոր է գալիս:

Դ օ ր ի ն. (Լոյալին) Պ. Լոյալ, կարծեմ ձեր
մէջքը կամենում է հարուածներ ուտել:

Լ օ յ ա լ. Ցկրկնն տեսութիւն: Թող Աստուած
պահէ ձեղ ամենքիու:

Օր զօն. Եւ թող կործանէ քեզ եւ քեզ ու-
ղարկողին:

Ե. ԵՐԵՒՈՅԹ

Ա Կ Ա Ն Տ, Օ Ր Գ Օ Ն, Դ Ա Մ Ի Ս, Տ Ի Կ, Պ Ե Ր Ա Կ Լ, Է Վ-
Մ Ի Ր, Մ Ա Ր Ի Ս Ն Ե Կ Պ Օ Ր Ի Ն

Օր զօն. Հապա, մայրիկ, տեմնում էք, որ ես
ծշմարիտ էի խօսում: Մնացածը կարող էք հասկա-
նալ նորա այս սիրագործութիւնից, համոզվեցաք
արդի՞օք վերջապէս թէ նա դաւաճան է:

Տ. Պ է ր ն ի շ. Ես այնպէս զարմացած եմ, որ
կարծես ամպերից եմ ընկել:

Դ օ ր ի ն. (Օրգօնին). Դուք զուր էք գան-
գատում, զուր էք անիծում խեղճ Տարախւֆին: Նո-
րա աստուածապաշտութիւնը սորանով աւելի ա-
պացուցվեցաւ: Նա շատ լաւ ցոյց տուեց իր սէրն
առ իր բարեկամը: Նա գիտէ, որ շատ անգամ հա-
րըստութիւնը մարդիկներին փչացնում է, ուստի
մարդասիրութեամբ նա կամենում է հեռացնել ձե-
զանից այն ամենն, ինչ որ ձեր փրկութեանը կա-
րող էր արգելք լինել:

Օր զօն. Դու լիմ, քեզ անդադար այս մի-
ենոն բառ պիտի կրկնվի:

Կ շ ա ն ս. (Օրգօնին) Մի տեսնենք թէ ինչ
պիտի անենք արդի՞օք:

Կ շ մ ի ր. Այս ապերախստ մարդու անզգամու-
թիւնը պէտք է հրապարակ հանէք: Այս կոչնչացնէ
պայմանագրի զօրութիւնը, եւ նորա անազնուու-
թիւնը չափաղանց կլշտացնէ ամենքին եւ այնու-
հետեւ դժուար թէ նա կարողանայ յաջողեցնել իր
գործը:

Զ. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ, ՕՐԳՈՆ, ԴԱՄԻՒՄ, Տ. ՊԵՐՆԵԼ, ԷԼ-ՄԻՐ, ՄԱՐԻԱՆ ԵՒ ԴՕՐԻՆ

Վաշեր. Ցաւում եմ, պարոն, որ ձեզ պիտի վշտացնեմ: Բայց ինձ սալիպում է այդ անել մօտաւլուս վտանգը: Մտերիմ բարեկամու, որին յայտնի է իմ յարգանքը առ ձեզ, հնարագիտութեամբ իմացել է մի գաղտնիք եւ հաղորդեց ինձ, որ ձեզ պէտք է անյապաղ փախչել: Ձեզ երկար խարօղ սրիկան յաջողած է ներկայանալ իշխանին: մասնութիւններ է արած ձեր դէմ եւ ներկայացրել է պետական յանցաւորի մի արկղիկ թղթեր, յայտնելով թէ դուք բարեկամ էիք նորա հետ, եւ պահում էիք յանցաւոր գաղտնիքը: Զիտեմ ձեր վրա բարգած յանցանքի մանրամասնութիւնը, բայց հրամանն արդէն արձակված է ձեզ բանելու եւ մասնիչն ինքն պիտի ընկերակից լինի նորան, ով որ գալիս է ձեզ կալանաւորելու:

Կշան և ս. Ահա ի՞նչ միջոցների է զիմում այն գաւաճանը քո հարստութիւնը քեզանից խլելու եւ տէր գանձալու:

Օր գօն. Այժմ տեսնում եմ, որ մարդը ամենաչար գաղան է:

Վաշեր. Փոքր ինչ ուշանախ եւս կարող է ձեզ համար գտանդաւոր լինել: Ձեզ տանելու համար իմ կառքս սպասում է դրան առաջ... Այս եւս ահա ձեզ հազար ոսկի: Շուտ, առանց ժամանակ կորցնելու: Հարուածը սարսափելի է, որից

պէտք է ազատվել փախուստով: Ցանկանում եմ հասցնել ձեզ մի սպահով տեղ եւ կուղեկցեմ ձեզ, մինչեւ որ կազմաէ ձեզ փախուստը:

Օր գօն. Ոհ, որքան պարտական եմ մնում ձեր ձեր այս հոգսերի համար: Իմ չնորհակալութիւնս յայտնելու համար ուրիշ ժամանակ է հարկաւոր: Խնդրում եմ Աստուծուց ինձ յաջողութիւն պարզեցնել, որ կարողանամ այս վեհանձն օգնութեան փոխարէնը հասուցանելու: Մնացէք բարով, հոգացէք ամեն բան:

Կշան և ս. Դու շատպիր, եղբայր իմ, մենք կաշխատենք ամեն բան հոգալ, ինչ որ պէտք է:

Հ. ԵՐԵՒՈՅԹ

ԿԱԷՍՆՏ, ՕՐԳՈՆ, ԴԱՄԻՒՄ, Տ. ՊԵՐՆԵԼ, ԷԼ-ՄԻՐ, ՄԱՐԻԱՆ, ԴՕՐԻՆ, ՎԱԼԵՔ, ՏԱՐՏԻՒՔ ԵՒ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

Տարսիւ ք. (Կանգնեցնելով Օրգօնին). Հանդարս, պարոն, հանդարս, մի՛ այդչափ շտաբէք: Շատ հեռու պիտի չգնաք ձեր օթեւանը գտնելու: ահա իշխանի հրամանը ձեզ իսկոյն բանու ուզարկելու:

Օր գօն. Նենդամիտ գաւաճան, այս վերջին հարուած էիր պահել ինձ համար: Այս հարուածով ես, աւազակ, ինձ ճամապարհ գնում: Այս, քո անարդ արարքներդ արժանապէս պատկեցիր:

Տարսիւ ք. Ձեր հայհոյանքները չեն կարող ինձ վիրաւորել: Ես սովորած եմ ամեն բան տանել Աստուծու համար:

Կ շ է ա ն ս. Ո՞րքան վեհանձն է. պէտք է արդարեւ զարմանալ:

Դ ա մ ի ս. Այս անօրէնը վիրաւորում է անշագար Աստուծուն:

Տ ա ր ս ի ւ փ. Զեր բոլոր վիրաւորանքներն ինձ չեն կարող վշտացնել: Ես ցանկանում եմ միշտ այն իմ պարտքը կատարել:

Տ ա ր ի ա ն. Զեր այս պարտքը շատ փառաւոր է, եւ ձեր այս պաշտօնը շատ աղնիւ է . . .

Տ ա ր ս ի ւ փ. Ամեն մի պաշտօն փառաւոր է, երբ գնում է նորան մեր վրա կառավարութիւնը:

Օ ր գ ո ն. Բայց, ապերախտ, գու մոռացել ես, որ ես իմ մարդասէր ձեռքը մեկնեցի քեզ թշուառութիւնիցդ ազատելու:

Տ ա ր ս ի ւ փ. Այս, ես զիտեմ թէ ինչ օգնութիւն եմ ստացել ձեզանից, բայց իշխանի շահերն իմ առաջն պարտքս են: Այս սրբազն պարտքիս արդար զգացումն մեռցնում է իմ սրտիս մէջ ամեն երախտագիտութիւն եւ այս նուիրական պարտքս կատարելու համար, ես կզոհեմ բարեկամիս, կնոջս, ծնողներիս եւ նոյն իսկ իմ անձս:

Է լ մ ի ր. Խարդախ կեղծաւոր:

Դ ո ր ի ն. Նա զիտէ դաւաճանի ձեւով ամենայն նուիրական բանից իր համար գեղեցիկ զիտակ չինել:

Կ շ է ա ն ս. Եթէ ձեր ասածով չափազանց պարտաճանաչ էք, հապա ի՞նչպէս բան է, որ ձեր պարտաճանաշութիւնն յայտնվեցաւ այն ժամանակ, երբ Օրդոնն իր աչքով տեսաւ ձեզ՝ նորա կնոջից ձեր յանդուգն պահանջներ անելիս, եւ դուք միան այն

Ժամանակ զիմեցիք մատնութեան, երբ նորաւ պատիւը ստիպեց իրան ձեզ դուրս հանելու: Ես ոչինչ չեմ ասում ձեզ թէ ինչ ճարպիկութեամբ նորաւ ամբողջ հարստութեան տէր զարձաք: Սակայն քանի որ դուք նորան այսօր իրբեւ յանցաւորին էք դատապարտում, հապա ի՞նչի էք համաձայնում նորանից ողորմութիւն ընդունել:

Տ ա ր ս ի ւ փ. (Ուսիլիանին) Ազատեցէք ինձ այս դատարիկարանութիւնից, եւ ինալլում եմ ձեզ տրված հրամանը կատարել:

Ո ս ի կ ա ն. Այսո, բաւական է, ինչ որ թողլ տուիր: Շատ ի զէպ ինձ յիշեցրիք: Ուստի ինձ աըրված հրամանը կատարելու համար, հաճեցէք անցապաղ զալ ինձ ձետ բանտ, որանեղ պատրաստ է ձեր ընակարանը:

Տ ա ր ս ի ւ փ. Բա՞նտ: Ես:

Ո ս ի կ ա ն. Այսո, դուք:

Տ ա ր ս ի ւ փ. Բայց ի՞նչի ես բանտ պիտի մտնեմ:

Ո ս ի կ ա ն. Ես պարտական չեմ ձեզ բացարութիւն տալու: (Օրգօնին) Հանգստացէք, պարոն, այսքան վշտից յետոյ: Մենք ապրում ենք այնպիսի իշխանի օրով, որը թշնամի է ամենայն խարդախութեան, որի աչքերը տեմնում են մարդկային սրտերը եւ որին անիրաւ կեղծաւորները չեն կարող խարեւ: Մեր իշխանն այդպիսի մարդիկների վերաբերմամբ շատ խիստ է: Բայց աղնիւ մարդիկ միշտ կզմնեն նորա հովանառութիւնն եւ պաշտպանութիւնը, բարձրանալով եւ փառաւորվելով: Թէպէտ Տարտիւքը նենդամիտ խորհրդով ձեզ թակարդ էր

լարել, սակայն, ձեզ մասնելով, ինքն ընկաւ մէջը
Նա յայտնի է զանազան ստորաթիւններով և խար-
դախութիւններով և այժմ ապացուցված է, որ նա
ինքնակոչ ոմն է, թափառաշրջիկ կեղծանուն կրօղ,
և ամենատեսակ մութ գործերի և խարեւայու-
թիւնների հեղինակ: Մեր իշխանը ճանաչել է այս
խարեւային առանց գժուարութեան և նորան ու-
ղարկեց այսեղ ինձ հետ նորա համար միայն, որ
իմացվի թէ որ աստիճան ստոր է սա: Վերջապէս
յայտնում եմ ձեզ, որ այն պայմանագիրը, որով կա-
մենում էիք ձեր բոլոր հարստութիւնն այս խարե-
ւային ընծայել, իշխանը չէ ընդունում, իսկ ձեզ
յայտնել պատուիրեց ինձ, որ բոլորսին ներում է
չնորհում, ձեր գաղանի յանցանքի համար ձեր նախ-
կին հաւատարմութեան փոխարին, եւ թէ իշխանն
երբէք չէ մոռանում մարդու արժանիքը, եւ չարը
մոռանալով, երբէք բարիք չէ մոռանում:

Օրգօն. Ուրեմն փառք քեզ, Աստուած:

S. Պեր Ակ. Այժմ ես նոր կենդանացայ:

Էշմիր. Ի՞նչ բարեբաղզութիւն է:

Մարիան. Ո՞վ կարող էր սպասել:

Օրգօն. (Տարժիւգին, որին տանում է ու-
սիկանը) Ուրեմն ահա քո վարձը, դաւաճան:

Բ. ԵՐԵՒԱՑՅԹ

ԱԼԵՍՆՏ, ՕՐԳՈՆ, Գ.ԱՄՐԻՍ, Տ. ՊԵՐԵԿԵԼ, ԷԼ-
ՄԻՐ, ՄԱՐԻՄԱՆ, ԳՈՐԻՆ, ՎԱԼԵՐ

Կղեան s. Բաւական է, սիրելի բարեկամ,
պէտք չէ լնկածի վրա ձեռք բարձրացնել, թող իր

անբաղդ վիճակին ենթարկվի այս թշուառը: Թող
իր իմուգը իրան տանջէ: Մաղթենք, որ Աստուած
ուղութիւն չնորհէ սորան եւ ատել տայ իր յան-
ցանքը և մեղմացնէ սորա վերաբերմամբ իշխանի
արդարադաս սիրառ: Իսկ գու շտապիր իշխանի մօտ
և ծնկաչոք յայտնիր քո գոհունակութիւնն այսչաք
ողորմած տնօրէնութեան և ներման համար:

Օրգօն. Այս, լաւ ես ասում, գնամ նորա
ունելին ընկնեմ, չնորհակալութիւնս յայտնելով, նո-
րա սրտի այս վեհանձնութեան համար: Եւ այս ա-
ռաջին պարտքս կատարելուց յետոյ, պէտք է միւս
նուիրական պարտքս կատարեմ: Քազցր պսակով
օրհնեմ Վալէրի վառ, անկեղծ և վեհանձն սէրը:

Վ. ԵՐԶ

լար
նա
դակ
ինք
եւ
թէ
խալ
դար
իմա
յայ
մեն
բայ
յայ
չոս
կին
երբ
մոռ

շիլ

և

պէ

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆՔԻ

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏՊԱ. Ա. Ե.

1. «Հայկական Աշխարհ» ամսագիր 1865 թ.
մինչեւ 1871 թ. և 1874 թ. մինչեւ 1878 թ.:
2. «Արարատ» ամսագրի խմբագրութիւն 1879
և 1889 թ. Ս. Էջմիածնում:
3. «Մանկավարժանոց» մանկավարժական ար-
սագիր 1884 թ. մինչեւ 1886 թ.:
4. Համակեղրօնական պրօդրամներ-ծրագիր-
ներ (առաջին փորձ) աշակերտական կամսներով
և գաստիարակների հրահանգներով, հայոց հոգ.
ծխական և միջնակարգ դպրոցների համար. 1883 թ.:
Գինն է. 50 կ.:
5. Մի կտղով երակ, մանկական թատ-
րօնական հատուած: 1885 թ.: Գինն է. . . 20 կ.:
6. Ղրիմի Ս. Խաչ վանք, 1891 թ.:
Գինն է. 20 կ.:
7. Լինհարդ և Գէրտրուգ, մեծ ման-
կավարժ Պէստալոցցիի պատումի թարգ-
մանութիւն: 1882 թ. Կ. Պոլիս: Գինն է. . . 30 կ.:
8. Լ. Տօլստօվի Կրէյցերեան Սօնատ,
թարգմ.: 1893 թ. Կ. Պոլիս:
Գինն է (1 ֆր.). 40 կ.:
9. Ի՞նչպէս պէտք է ապրել բաղդաւոր
լինելու համար (Սմալլսից): Ս. Էջմիածին:
1894 թ.: Գինն է. 20 կ.:
10. Մովսէս Խորենացու Հայոց պատ-
մութիւն, աշխարհաբար, բարեփոխված,
սրբագրված Բ. ապագրութիւն: Պետեր-
բուրգ: 1897 թ.: Գինն է. . . . 1 ր. 50 կ.:
11. Տարտիւֆ, Մօլիկի կատակախաղ,
թարգ.: 1898 թ. Բագու: Գինն է. . . . 50 կ.:



ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆՀԻ

ԶՑՊԱՌԾ ԱՃԽԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

12. Ընդհանուր Պատմութիւն, Հին գար, Ա.
Էջմիածնի Գէպրեան ձեմարանում դասախոսված,
(Նույղինից):

13. Ընդհանուր պատմութիւն, Միջին գար, Գ.
ձեմարանում դասախոսված (Նույղինից):

14. Առափափ պատմութիւն (Իլօվայսկուց):

15. Տրամարանութեան համառոտ ձեռնարկ, Գ.
ձեմարանում դասախոսված:

16. Մանկավարժական Կազմողիք (Հրահանդիչ
կրթական յօդուածներ):

17. Լեւոն Առաջին, ողբախազ-զրամա, նոր
որդագրված:

18. Մանկավարժական յիշասակարան (Մի տա-
րիուկէս և վրապական գովոցների մէջ):

19. Մեր գործածած արարատեան կամ արեւ-
լեան աշխարհաբար լեզուի հոլովմոնք, խոնար-
հմունք, հոլովառու և հոլովվօզ նախազրութիւն-
ներ և քանի մի ընդհանուր կանոններ:

20. Մանկավարժութիւն Դադեի, թարգմանու-
թիւն:

21. Բնմբասացութեան հրահանդ, Ա. Էջմիածնի
Գ. ձեմարանում դասախոսված:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱԾ ՅՈՒՉՆՎԱԾ ԱՃԽԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

22. Երկու հոգիսկոպոս և երկու քահանար:

23. Փաւուսաս Բիւզանդի հայոց պատմութիւն,
աշխարհաբար թարգմանութիւն:

2292

2013

